


7932

1898



2002

2011

33-51

5-76

W 1164

Ա. Պիրզանեան

# ԲԱՄԲԱԿԻ

## ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

Հրատակ Խ. Ա. Ղազ Խ~~XXX~~-ի

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տպարան ՄԱՅՐ Ա. Ք. ԵԶՄԻԱԾՆԻ.

1898

633.51

Ա-76

ԿԵՐ

630  
91-ՄԻ

Ո. ՄԻԹՎԵՑԵԱՆՑ

W 1168

# ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

1003  
1053

ՎԵԼԵՐԾՎԵՑ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ.

1898

Дозволено Цензурою, Тифлисъ, 6 Июля 1898 г.

\*  
\*\*

Աչքի առաջ ունենալով մի կրղմից երկաթուղու զծի մօտենալը Երեւանեան նահանգին, որով անշուշտ մեծ փոփոխութիւն առաջ կայ տեղային գիւղատնտեսական կեանքի մէջ, եւ ըստ իս ի միջի այլոց կլինի յօգտա բամբակի արդինաբերութեան, որովհետեւ ալիքը հացահատիկներ եւ այլ երկրագործական բերքեր կատացուին երկաթուղով թերեւս աւելի ձեռնտու գներով, քան մեր գիւղացուն կարժենայ իւր հողից ստանալ իսկ բամբակի համար ընդհակառակն կլինի մեծ պահանջ եւ գիւղացուն դժուար չի լինի իւր բամբակը աւելի ձեռնտու գնով վաճառել քան թէ այդ լինում է ներկայումս. միւս կրղմից աչքի առաջ ունենալով գիւղացու տգիտութիւնը, ինչպէս առհասարակ գիւղատնտեսութեան մէջ, նցնակէս էլ մանաւանդ բամբակի մշակութեան մէջ, որու նա փոխանակ հարիւրի ստանում է յիսուն կամ աւելի պակաս իւր ցանած բամբակատեղից, ուստի եւ ցանկանալով օգնած լինել մեր երկրագործ գիւղացոց՝ պարտք համարեցի ինձ զրել բամբակի մշակութեան մասին:

Ս. ՄԻՐԶԱՅԵԽԱՆՅ.

ԲԱՐԵԱԿԸ

## ՆՈՐԱ ՄՃԱԿՈՒԹԻՒՆԸ

**Ա**ամբակի բոյսը (Gossypium) թփանման է (թռւփ — քոլ), վայրենի վիճակում բազմամեայ բոյս է, բայց մշակուելով դարձել է միամեայ ինչպէս մեղնում:

Բամբակի թուփը պատկանումէ Malvaceae ընտանիքին. պսակաթերթերը ծերը ծ-են և նայելով տեսակին լինում են գեղին և սպիտակագեղին գոյնով, վերջին գոյնը փոխւում է վարդագոյնի: Բաժակը հիմքում ներկայացնում է մի ամբողջութիւն, իսկ վերեւում բաժանուածէ 5 մասի: Ցիցերը (тычинки) թռուով շատ են, որոնք իւրեանց սարին մասում միանում են միմեանց. փոշանոթները (пыльники) մի բնանի են:

Պառողը ներկայացնումէ 5 վեղկանի ալգորիթմ՝  
(տեղային լեզուով հասածը կոչուումէ լօզայ), կոր-

\* Ես ինչու յաձախ գտած եմ Յ եւ Հ պեղամակի դօքայ—  
երկանցը մեզնում կուշում է իշխան:

զով, իսկ խակը—լուլ), և կազմումէ 5 բուն, իւրաքանչիւր բնում կան 6-7 և երբեմն 9 հատ սերմեր (հունո): Սերմերը ծածկուած են նուրբ և քընքոյշ մազիկներով:

ԿՀԻՄԱՅ. Բամբակը իբրև վայրենի, բազմամեայ բոյս՝ բուսնում է տաք երկրներում՝ ծառանման. իսկ իբրև մշակուած միմեայ բոյս՝ բուսնում է և պտուղ հասցնում այն երկրներում՝ որտեղ, նայելով տեղական եղանակներին, նա կը կարողանայ ապրել 7—9 ամիս, այն երկրում՝ որտեղ չկայ անսպասելի և զգալի փոփոխութիւն տաքութեան և ցըրտի, որտեղ ցերեկը կիզիչ է, իսկ գիշերը խեղդիչ, որտեղ լաւ բուսնում և հասուն ու հսաւէտ պրտուղ են տալիս դեղձենիք: Մի խօսքով բամբակը սիրումէ տաք կիմայ, և այդ պատճառով շատ տեղ նա կոչւում է արեւի բոյս:

Ամերիկայում՝ որտեղ բամբակի մշակութիւնը շատ զարգացած է, ցանում են բամբակը արեգունի (բառոժ) տեղերում: Բամբակի բուսականութեան սահմանը համարւում է հիւսիսային լայնութեան  $42^{\circ}$ , իսկ հարաւային լայնութեան  $30^{\circ}$  աստիճանների մէջ, բայց այն երկրներում, որոց տարեկան տաքութեան (միջին) աստիճանը  $13^{\circ}—14^{\circ}$  ից պակաս չէ:

ՏԵՍԱԿՆԵՐ. Բուսաբան Լիննէյը բամբակի ցեղը բաժանումէ հինգ տեսակի. իսկ ուրիշ բուսաբաններ հաշւում են մինչեւ 20 տեսակ: Բամբակի

տեսակները միմեանցից զանազանելու. Համար աւելի լաւ է համարւում ուշ դարձնել նորա դրութեան վերայ հասած միջոցին, այսինքն, առ պտուղը (զօզան) հասած միջոցին բոլորովին է բացւում, թէ միմիայն թեթև կերպով ձաքւումէ փեղկերի միմեանց կպած տեղում, և ըստ սերմերը զիւրութեամբ են ազատուում բամբակի մազիկներից, և ազատուելուց յետոյ նորա բոլորովին մաքուր և տկոր են, թէ գժուաբութեամբ են ազատում և ազատուելուց յետոյ նորա մաքուր չեն, թէ նոցա վերայ կպած մնում են մազիկների հետքերը: Այս հիման վերայ բամբակը բաժանուումէ գլխաւորապէս երեք տեսակի:

Ա. տեսակին պատկանում է այն, որ հասած միջոցին տալիս է ոչ բոլորովին բացւող, այլ միմիայն փեղկերի միմեանց կպած տեղում թեթև կերպով ձաքւող (զօզաներ) կորզովներ, որոնց սերմերի վերայ մաքրելուց յետոյ մնում են բամբակի մազիկների հետքերը կանաչ շուաքով: Սա իսկ Հայաստանում գտնուած չին տեսակ բամբակն է (Հնդկաստանի համարուած), որը մեզնում կոչւում է ղարազայ (Gossypium herbaeum): սա յատկութեամբ և արժեքով աւելի ստոր է համեմատ հետեւեալ տեսակներին:

Բ-ին պատկանում է այն տեսակը՝ որ հասուն միջոցին տալիս է լայն բացւող կորզովներ, որի սերմերի վերայ թէպէտ և կպած մնում են բամբակի

մազիկների հետքերը նոյնպէս քիչ կանաչ շուաքով,  
բայց համեմատելով առ տեսակի հետ, աւելի քիչ և  
թղթի կերպով են լինում. այդ պատճառով էլ այս  
տեսակը աւելի դիւրին է մաքրւում քան առաջինը.  
սերմերն էլ աւելի խոշոր են քան առաջին տեսակինը:

Սա Ամերիկայի լեռնային տեսակն է, և կոչում  
է Ուլպլանդ (Upland). Սա ամենաօգտավուշ տեսակն  
է մեզնում մշակելու համար, թէ բերքի առատու-  
թեան և թէ յատկութեան կողմից, բայց վատ մշա-  
կուելու պատճառով, մեզնում գրանից չեն ստա-  
նում այն՝ ինչ որ ստանում են Ամերիկայում:

Գ. տեսակը նոյնպէս տալիս է լայն բացւող  
կորզովներ, բայց սերմերն բոլորովին տկլոր, հարթ,  
ու և փայլուն են: Սա կղզիական տեսակն է և Ա-  
մերիկայում կոչում է Զէա իսլանդ—Sea Island  
cotton (Gossypium maritimum.): Սորա մի այլ տե-  
սակն է (Nankeen) Սանկեկու կոչուածը, որ ունի  
սպիտակ և թեթև դարչնագոյն մազիկներ:

Այս տեսակներից միմիայն առաջին երկուսը  
առանձին նշանակութիւն ունին մեզ համար, որով-  
հետեւ զ տեսակը, ինչպէս ասացինք, կղզիական տե-  
սակն է, ուրեմն սովոր է ծովային մեղմ կիսմայի,  
ուստի և մեր չոր և խիստ տաք կլիմայում նա լաւ  
չի աճի, և այդ պատճառով էլ կստացուի աւելի քիչ  
և վատ յատկութեամբ բամբակ, քան ստացւում է  
նրանից յիշեալ կղզիներում. սորա միւս տեսակը, որ  
մեզնում յայտնի է Եղիպտական անունով, գուցէ

յաջող աճի վրաստանում և ոչ Երևանեան նա-  
հանգում:

Ա. տեսակի—«Հարազօգայի», մազիկները սպի-  
տակ են, կոպիտ են, նոցա երկայնութիւնը հասնում  
է  $\frac{1}{2}$  (կես) դիւյմի: Սա պիտանի է միմիայն հասա  
մանուածքի համար:

Բ. տեսակ (Upland) բամբակի մազիկները աւե-  
լի սպիտակ են, երբեմն գեղին շուաքով, նազուկ,  
քնքոյց և մետաքսանման են: Սորա մազիկները եր-  
կու անգամ աւելի երկայն են քան առաջնինը: Սա  
պիտանի է բարակ և նուրբ մանուածքի համար:

ՀՈՂԻ ԸՆՑՐՈՒԹԻՒՆԸ.

Բամբակը չի սիրում բոլորովին զուտ կաւա-  
յին, ծանր և պինդ հող, և թէպէտ նա ընդու-  
նակ է յարմարուել զանազան յատկութեամբ հողե-  
րում, ինչպէս փորձը ցոյց է տալիս մեզնում, բայց  
սիրում է փորփոշ, աւազային, թեթև և սննդարար  
հող: Բամբակի արտը պէտք է ազատ լինի աւելորդ  
խոնաւութիւնից, չայիրից և այլ աւելորդ խոնաւ-  
րից, որոնց հետ բամբակը մաքառել չի կարող:

Կրային հողերը, որոնք իրենց մեջ պարունա-  
կում են մեծ քանակութեամբ օրգանական մասները  
և ոյնպէս պիտանի են բամբակի համար:

Ասացինք որ զանազան խոտերի (քաղի) հարևանութիւնը անտանելի է բամբակի համար. այդ պատճառով էլ բամբակի համար նշանակուած արար ցանքից առաջ չի կարելի աղբել տաւարի թարմ (թրիք) աղբով (ԸԵՒԿԻ ԽԱՅՈՅԵ), որովհետեւ թարմ աղբը պատճառ է դառնում աւելորդ խոտերի առատ աճելուն, բայց որովհետեւ բամբակը հողից պահանջում է լաւ սննդի պաշար, ուստի տաւարի և առ հաստրակ անասնոց աղբը պէտք է նախ փթեցնել և ապա նորանով աղբել արար, եթէ աղբելուց անմիջապէս յետոյ պէտք է ցանուի բամբակ:

Եթէ բամբակ ցանած հողը խոնաւ է կամ՝ ընդունակ է մշտապէս պահպանել պէտք եղած խոնաւութիւնը, այդ գէպում բամբակի համար օգտաւէտ է չորային և կիզիչ ամառը: Աւելորդ խոնաւութիւնը և աւելորդ ջրելլ մանաւանդ արեից զուրկ տեղում՝ վնաս է բամբակին, որ և ծաղկելու ու պտղի հասնելու միջոցին պատճառ է լինում ծաղիկների և լուլէրի թափուելուն, որովհետեւ այդ գէպում սննդարար նիւթերը գնում են զիսաւորապէս նոր ճիւղեր կազմելու համար. բացի այդ խոնաւութիւնը պատճառ է լինում բամբակի զանազան հիւանդութիւնների, նոյնպէս թրթուրների և ոջիւների բազմանալուն:

Բամբակի համար պիտանի կարող են համարուել փորփոշ և տղմասաւազային հողերը. որովհետեւ այդպիսի հողերը ջուր և աւելորդ խոնաւութիւն իւր-

եանց մէջ չեն պահի, այն ինչ այլպիսի հողերում օդը աւելի ազատ կարող է մօւաք գործել դէպի արամատները. իսկ այդ հանգամանքը մեծ նշանակութիւն ունի բյուերի կանոնաւոր մննդառութեան համար:

Ամերիկայում աւելի հռչակ ունեն թէ քամակութեան և թէ յատկութեան կողմից աւազոտ հողերից սաացուած բամբակները: Տեղ աեղ այդ հողերը պարունակում են մօտ  $75\%$  խոշոր աւազ, մօտ  $20\%$  մանր աւազ և մօտ  $5\%$  տիղմն որի մէջ պարունակուում են զանազան օրդանական մասներ. այնուամենայնիւ բամբակի համար պէտք է գերադասել չափաւոր աւազային և անոպատճառ շատ օրգանական բազագրութիւն և առաա մնունդ ունեցող հողերը:

### ՀՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ.

Ասացինք որ բամբակը յատկութեամբ լաւ և առատ բերք է տալիս աղմասաւազային թեթև և փորփոշ հողերում: ուրեմն բամբակի համար նշանակուած հողին մենք պիտի աշխատենք տալ վերոշյշեալ յատկութիւնները, որը ըստ հնարաւորութեան կարելի է կատարել հողը լաւ մշակելով:

Հողի պատրաստութիւնը անհրաժեշտ է սկսել աշնանից. բայց աւելի լաւ է սկսել նոյն իսկ գար-

նանից, մանաւանդ եթէ հողը կաւային է—պինդ է։  
և որպէս զի հողը ֆիզիքապէս և քիմիապէս լաւ-  
անայ և սննդաբար նիւթեր գոյացնի իւր մէջ,  
հարկաւոր է որ նա ենթարկուի օդի գործիչների  
(թթուածնի, ածխածնի ևն.) ազդեցութեան եր-  
կար ժամանակ. և որպէս զի յիշեալ գործիչներն կա-  
րողանան ազդել և փոփոխութիւն յառաջ բերել հո-  
ղի մէջ, անհրաժեշտ է որ լինի տաքութիւն և խո-  
նաւութիւն. տաքութիւն միշտ արեից ունենք, խո-  
նաւութիւնն էլ հարկաւոր չափով պէտք է տշ-  
խատենք պահել հողի մէջ։

Դորա համար հողը պէտք է գութանով վարել երբ  
նա խոնաւ է (սարակօտած է) վարնանը. աշնանն  
էլ վարել անձրեներից յետոյ, իսկ ամառը, եթէ հար-  
կաւոր չափով անձրե չկայ, այդ նպատակի համար  
պէտք է ջրել և սարակօտելուց յետոյ վարել։ \* Նամ  
հողը գիւրին կը վարուի և կոշտեր չի տայ, իսկ օդը  
իւր գործիչներով եռանգուն կերպով կը ներգործի  
խոնաւ. և վարած հողի վերայ, մանաւանդ տարուայ  
տաք ժամանակ. և որպէս զի խոնաւութիւնը վարած  
հողի մէջ պահպանուի, հարկաւոր է ամառ և գար-  
նանը՝ խոնաւ հողը վարելուց անմիջապէս յետոյ,  
նորա երեսը փորփոշացնել փոցիւլով (աւելի լաւ է  
երկաթեայ փոցիւլով)—փորփոշ շերան էլ ընդունակու-

\* Կամ պէտք է վարել ամառուան բոյսեր հեծելուց ան-  
միջապէս յետոյ, ըրողնելով որ հողը լուսայ:

թիւն չունի ցելի \* ներքեկի շերտերից խոնաւութիւն  
դուրս հաղորդելու։

Աշնանը այդ ցելի նորից պէտք է վարել գու-  
թանով, բայց աւելի խորութեամբ քան առաջին  
անգամ և թողնել մինչեւ գարուն։ Եթէ գարնանը  
կամ ամառը որ և է պատճառով հողը չվարուի,  
այն ժամանակ բամբակի՝ ինչպէս և ամենայն մի  
գարնան ցանքի համար պէտք է անպատճառ վա-  
րել աշնանը գութանով և առանց փոցիւլու  
պէտք է թողնել ենթարկուելու աշնանային  
անձրեներին և ձմեռուայ ցրտերին, որից հե-  
տեւալ գարնանը ցամաքելուց յետոյ կստացուի  
այնպիսի փորփոշացն հող, որպիսին մենք չենք  
կարող ստանալ ոչ մի երկրագործական գործիքով։  
Ամառուայ կամ աշնան վարելուց (եկող գարնան  
համար) և երկար ժամանակ մթնոլորտի ազդեցու-  
թեանը ենթարկուելուց հողը լաւ անում է յառ-  
կութեամբ թէ ֆիզիքապէս և թէ քիմիապէս։  
Փիզիքապէս լաւանալու պատճառը հետեւան է։—  
հողի մէջ գտնուած ջուրը նորա մազային խողո-  
վակներում սառելով և լայնանալով, հողի մասնիկ-  
ները միմեանցից բաժանում է և այդ պատճա-  
ռով էլ հողի պինդ կոյտերը, սառոցը հալուելուց  
յետոյ (գարնանը) փշտում են, որով և ամբողջ  
արտը գարնանը ներկայացնում է ինչպէս մաղից

\* Վարած ի՞ոդ։

անցկացրած փորփոշ հող, կազմուած մանրիկ բայց  
կոլոր հատիկներից: Այսպիսի հողի համար կարելի  
է ասելութէ նա հասուն է ցանելու համար: Թէ  
որքան մեծ նշանակութիւն ունի ցրտի այս գոր-  
ծողութիւնը հողի վրայ, ոյդ բացատրում է գեր-  
մանացոց առածը. — «Յուրտը ամենալաւ վար  
անողն է»:

Քիմիապէս լաւանալու պատճառն այս է.

1.) Դութանով հողի ներքին շերտելը շուռ գալով  
վերև և ենթարկուելով մժնողորտի գործիչների ազ-  
դեցութեան, քայլայւում են (վայերայած) և  
նորա մէջ պարունակուած բոյսերի համար ան-  
պատրաստ և գժուարամարս սննդարար նիւթելը  
վերափոխւում են դիւրամարսի:

2.) Ամառուանից կամ աշնանից վարուած հո-  
ղում՝ ժամանակ կունենան փթելու աւելորդ խոսելը  
և նոցա սերմերը, որով ոչ միայն չեն նեղի ապագայ  
ցանելիք բոյսին—բամբակին, այլ և կդառնան  
պատրաստի կերակուր նորա համար:

3.) Տաքութեան տակ, խոնաւ հողի մէջ առաջ  
են գալիս թէ տեսանելի և թէ մանաւանդ ան-  
տեսանելի (առանց խոշորացուցի) կենդանիներ,  
որոնք կարծ միջոցում հազարաւոր միլիարդներով  
բաղմանում են, ապրում են հողով և մեռնում  
են հողի մէջ: Այս կենդանիները թէ իրենցով և  
թէ իրենց ապրելու գործողութեամբ (հողը կուլ  
տալով և դուրս տալով) հողը ֆիզիքապէս և քի-

միապէս փոխում են լաւի, և ինչ արտօւմ որ  
հնարաւորութիւն է եղել այդ կենդանիների բազ-  
մանալուն և կատարեալ գործողութեան՝ այն հողը  
անպատճառ հասունացած կը լինի և կտայ առատ  
և լաւ յատկութեամբ բերք: Հասուն հողը լի-  
նում է մուժ գոյնով, քնքոյշ, փափուկ-փորփոշ և  
իւղոտ: Նորա մէջ նկատեում է մամուի նման բու-  
սականութիւն, որպիսին երեսում է ջրերի մօտ  
գանուած փթող փայտի վերայ:

Հարկաւոր ենք համարում շեշտել, որ ան-  
հրաժեշտ է արտը վարել գութանով և ոչ չթով  
(արօրով), որովհետեւ չութը հողը չի շուռ տալիս  
գութանի նման, այլ միմիայն մասամբ քրքրում է  
երեսից և մասամբ էլ թողնում է անփար, որից  
ի հարկէ զգալի և օգտաւէտ փոփոխութիւն հողի  
յատկութեան համար սպասել կարելի չէ: Այն  
տեղերում որտեղ հողը պահում է իւր մէջ բա-  
ւական խոնաւութիւն և անձրւները յաճախ են,  
մի խօսքով որտեղ ամառը բամբակը անհրաժեշտ  
խոնաւութիւնից զուրկ չի մնում, վարելուց ակօս-  
ներին պէտք է տալ այն ուղղութիւնը, ինչ ուղ-  
ղութեամբ որ ջուրը կարող է դուրս հոսել, որ-  
պէս զի գարնան աւելորդ ջրերը կարողանան ազատ  
դուրս հոսել արտից, որով և հողը գարնանը շուտ  
կը որանայ, հետևաբար և շուտով կարելի կլինի  
ձեռք զարկել հողի հետագայ մշակութեան և պատ-  
րաստութեան ցանքի համար:

Հնդ հակառակն երբ արտը գտնւում է զեմի  
աեղերում և ջրելու հնարաւորութիւն չկայ կամ  
առ հասարակ այնպիսի տեղերում որտեղ ամառը  
կիզիչ է և ջրի ու անձրեփ պակասութիւն կայ,  
այն ժամանակ ակօսներին ջրի ընթացքին հակա-  
ռակ ուղղութիւն պէտք է առլ որպէս զի ջրերը  
լճանալով ծծուեն հողի մէջ և ծառայեն ապագա-  
յին իբրև պաշար, այն է, ամառը հողի մազային  
խողովակներով նորա խորքում գտնուած ջուրը  
կրարձրանայ վերև և կը ծծուի բամբակի արմատ-  
ներով:

Եթէ հողը փափուկ է և ունի բաւական սր-  
ննդարար նիւթեր, բաւական է վարել 4—5 վեր-  
շոկ խորութեամբ. իսկ եթէ հողը պինդ է և զուրկ  
սննդարար նիւթերից և մի և նոյն ժամանակ եթէ  
հողի տակի շերտը (подиоцва) բոլորովին անմշակ-  
վայրենի չէ, այն ժամանակ պէտք է վարել 6—8  
վերշոկ խորութեամբ. հակառակ գէպքում, այ-  
սինքն, երբ հողի տակի շերտը անմշակ-վայրենի է,  
այն ժամանակ խորը վարելով և անմշակ հողը վերև  
շուր տալով՝ առատ բերք չենք ստանալ արտից:  
Աշնան վարից յետոյ պէտք չէ փոցիսել (օօրոն-  
ված), որովհետեւ հողի կոշտերի և շերտերի-լաս-  
տերի մէջ, ինչպէս ասուած է, ջուրը ձմեռն սա-  
ռելով աւելի լաւ կը փորփոշացնի քան թէ փոց-  
իր, որը այս գէպքում կիսանգարի ձմեռուայ-  
գործողութեանը:

Գալով գալնանը, երբ կարելի է ցելի մէջ մանե  
գալ, պէտք է նախ ընդ լայնութեամբ և ասլա ընդ  
երկայնութեամբ ակօսների վարել ցելը չժովի որից  
յետոյ պէտք է փոցխել նախ ընդ երկայնութեամբ  
և ասլա ընդ լայնութեամբ ակօսների: Սորանից  
յետոյ պէտք է անմիջապէս ցանել քանի դեռ  
հողը իւր նամութիւնը չի կորցրած, որովհետեւ  
նամ հողում սերմերը տաքանալով շուտով կուռ-  
չեն և կծլեն հաւասարապէս, իսկ եթէ հողը չոր-  
լինի՝ սերմերը ուշ կծլեն և անհաւասար, բայց  
այդ ցանելուց յետոյ էլ փոցխուելով մանը հողը  
կդառնայ փոշի (ինչպէս է ձանապարհների վրայ),  
որը ջրելուց կամ անձրեներից յետոյ կազմում է  
ամուր կեղե ցանած հողի երեսին, խեղզում է  
բյուսին և արգելք է լինում ծլերի աղատ դուրս  
գալուն և աճելուն. իսկ կոշտերը արտի չորացած  
միջոցին փոցխելուց չեն փշրուի. այն ինչ նամ վի-  
ճակում փոցխելուց՝ կազմում են հողի մանր բայց  
կլոր հատիկներ, որոնք միանալով միմեանց հետ  
կազմում են բազմաթիւ մանր ծակոտիկներ, որով  
հողը թէ զիւրափխարելի է դառնում և թէ մա-  
զային խոզովակներով լի, օգն էլ աղատ մուտ կու-  
նենայ այսպիսի հողի մէջ, այսինքն կատացուի մօ-  
տաւորապէս այն՝ ինչ որ պահանջւում է հողի ֆի-  
զիքական յատկութիւնից բոյսի համար:



ՀՈՂԸ ՄՇԱԿԵԼՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ.

Հողը մշակելու համար այժմ կան զանազան կատարելագործուած մեքենաներ և գործիքներ, բայց մեր մէջ նոքա առ այժմ համարեա ամենենին մուտք չունեն: Մեր մէջ գործ են դրւում 1) հինձեկի փայտեայ գութան, որի բանեցնելու համար հարկաւոր է 5—6 լուծ գոմեց, այս իսկ պատճառով ամեն գիւղացի հնարաւորութիւն չունի գութան ունենալ և մանաւանդ բանեցնել: Այդ գութանը բանեցնելու համար գիւղացիք ստիպուած են միանալ միմեանց հետ, որ իրենց ունեցած լծի անսառներով կարողանան փոխարինաբար միմեանց արտեր վարել: Սորանից պարզ երեսում է, որ մի չնչին տարածայնութեան պատճառով (որը յաճախ պատահում է) գութանի գործը իւանգարւում է և արտերը մնում են անվար կամ ամեն մարդ ստիպուած է լինում վարել չթով (արօտով):

1891—92 թուականներից ես ականատես լինելով գիւղական վերոյիշեալ հանգամաններին՝ աշխատեցի և ինձ յաջողուեց կարճ միջոցում գիւղացոց համոզել և բերել տալ նոցա համար երկաթեայ նոր սիստեմի Ռո. Սակլի գութաններից տասն հատ: Այդ գութանները ամենագովելի գութաններն են և ամեն մի կանոնաւորուած կալուածում ընդունաւած: Սոքա արժեքով աւելի չեն քան յիշեալ

փայտեայ գութանը, այն ինչ արած վարը անհամեմատ աւելի կատարեալ է և վարում է օրեկան 5/4—1 գեսեատին, որ փայտեայ գութանով անկարելի է: Բացի այդ, Սակլի գութանի համար հարկաւոր է 2—3 զոյգ եղ կամ 2 զոյգ զոմեց փոխանակ 6 զոյգի, և բանեցնելու համար բաւական են 2 հոգի 15—20 տարեկան տղաներ, որովհետեւ այդ գութանները իրենք իրենց են գարում լինընավար են (самоходы). և վարողի կողմից ոչինչ հրմտութիւն չեն պահանջում: Իսկ փայտեայ գութանի համար անհրաժեշտ են 4—5 մարդ և անպատճառ մի հմուտ մաճկալ: Սակլի գութաններով գիւղացիք շատ գոհ մնացին և հիմայ հետզհետէ Սարդարապատի շրջակայքում տարածւում են գոքա և զոյց նման գութանները: Սակլի գութանները ես խորհուրդ տուի մի երիտասարդի գործ դնել քարոտ (լեռնային) տղերում և փորձը ցոյց տուեց, որ այդ գութանները աւելի քան ուրիշները յաջող են բանում և այդպիսի տեղերում:

2) ԶՈՒԹՅՈՒ (արօրը).—Սորանով վարած հողից մենք մեծ պահանջ անելու իրաւունք չունենք, որովհետեւ սա վարում է ոչ խոր (սաղը), անկատար և չի կարտում չայիրի և այլ աւելորդ բոյսերի արմատները, ուստի և մանաւանդ բամբակի համար նշանակուած հողը անպատճառ պիտի վարուի գութանով, որով ամենայն արմատներ կը-

տրուելով և շուռ գալով ձմեռը սառում են և չորանում։ Հակառակ դէպքում կրկնում եմ ջրթափար բամբակի արտը կլինի լի ամեն տեսակ աւելորդ բոյսերով (քաղով), որոնցից բամբակը շատ խեղճանում է։ շատ անգամ այդ է պատճառը, որ արտը չէ տալիս քառորդն ( $\frac{1}{4}$ ) անգամ այն քառակութեան, ինչ որ կարելի էր ստանալ։ Չութը կարելի է գործ դնել միմիայն վարած հողերը կը րկին քրքրելու համար, և այնուհետեւ որտեղ չեն տարածուած այդ նպատակի համար կատարելագործուած նոր գործիքներ։

3) ՓՈՅՑՈՐ (boronia).— Շինուած է փայտեայ 3—4 արշին երկայնութեամբ և 2—3 վերշոկ հաստութեամբ գերանից, որի վերայ ցցուած են մեծ մեծ փայտեայ 5—6 վերշոկ երկայնութեամբ ատամներ։ Այս փոցիը իւր դերը կանոնաւոր չի կատարում որովհետեւ սա կոշտերը այնպէս չի մանրացնում և հողը այնպէս չի փորփոշացնում՝ ինչպէս երկաթեոյ նոր սիստեմի փոցիները։ իսկ ցանելուց յետոյ փայտեայ փոցիով սերմերը մասմբ կատարեալ հողի տակով չեն լինում։ մասմբ էլ այնպէս խորն են ձգւում որ կամ չեն ծլում։ կամ եթէ ծլեն էլ չեն կարող դուրս գալ հողից և կիտեն ընկած տեղում։

Այդ պատճառով ահա ամեն մի երկրագործ գիւղացու համար անհրաժեշտ է մի երկաթեայ փոցի ունենալ, որը ունի շատ լաւ կող-

մեր, օրինակ եթէ ուզում են վարած հողը քոլը քոսից ազատել կամ արտի մէջ խոնաւութիւն պահպանել, կամ հողին լաւ փորփոշութիւն տալ և ջրած հողը ամուռ կեղեց ազատել, այդ երկաթեայ փոցիով կարելի է։ Բացի այդ, դորա ատամները այն յուրմարութիւնն ու երկարութիւնն ունեն, որ նոցանով սերմերը կծածկուին կատարեալ և մօտառապէս պէտք եղած խորութեամբ։ Երկաթեայ փոցիներ կան զանազան սիստեմի, բայց ամենից յարմարը մեր հողերի համար՝ է այսպէս կոչուած «Ծորող-միւռը» փոցի հովարդի (borona անգլացի Գովարդ)։

Ուրեմն, կրկնում ենք, մեր երկրագործ գիւղացուն անհրաժեշտ է առ այժմ ունենալ վերոյիշեալ երկաթեայ դութանից և փոցից մի մի հատ և մի հատ էլ սովորական չութ (արօր)։

Բացի այդ բամբակի թփերի բուգը լեցնելու համար անհրաժեշտ է ունենալ կուտակող (օկոչնիկ) անուանուած գործիքը։ որի խոփը մեր չթի խոփի ձեւն է բայց մեծ չափով, և ունի երկու կողմից էլ հող շուռ տւող թեւեր, որպիսին գութանը ունի մի կողմից։

---

ԱՆԻ ԵՒ ՆՈՐԱ ՑԵՍԱԿՆԵՐԸ (յաճրութեայ)։

---

Համապուած լինելով որ մեր երկրագործ

դասը հողերը պարարտացնելու, ինչպէս և այդ նպատակի համար գործածուած նիւթերի (աղբի) մասին համարեա ոչինչ գաղափար չունի, ուստի անհրաժեշտ ենք համարում այդ մասին մի փոքր մանրամասն խօսել:

Մեր երկրագործները աշխատում են հողից վերցնել որքան հնարաւոր է շատ բերք, առանց մտածելու, որ գորանով նոքա հետզետե ուժապառ են անում հողը, ուրեմն և պէտք է որ և է մի կերպով յետ տան հողին այն՝ ինչ որ վերցնում են նորանից, իսկ հակառակ դէպքում ընդ միշտ կղրկուեն հողի բերքից:

Ինչքան էլ որ լաւ մշակուած լինի արար, եթէ նա երկար տարիների ընթացքում անդադար ցանում է, բայց երբէք աղք չի ստանում երբէք էլ թէ յատկութեամբ և թէ քանակութեամբ լաւ բերք չի տայ: Երբ մեր հողագործը նկատում է այս վերջին հանգամանքը՝ նա վարւում է հետեւեալ կերպով:— 1) Թողնում է խամ: 2) եօնջայ է ցանում, որը ամեն գարուն մոխրով աղբում է (քլում է):

Խամ թողնելը որոշ չափով նպատակայարմար կլինէր, եթէ հողի առատութիւն լինէր, բայց որովհետեւ այժմ շատ տեղերում ժողովուրդը շատացել է, իսկ հողերը քիչ են, ուստի և ստիպւած են ամեն տարի մի և նոյն հողը ցանելը որով և հողերը ուժասպառ լինելով գաղարում են

առատ բերք տալուց, ինչպէս արդէն նկատում է մեր մէջ— էջմիածնայ գաւառի շատ տեղերում: Մոխիր շաղ տալն էլ մեզնում զիւղացին կատարում է համարեա միմիայն եօնջի արտի վերաբերութեամբ որ ամեն տարի գարունը բացւելուն պէս տանում է և սայլի վրայից անհաւասար շաղ է տալիս— ցինում է արտի երեսին: Միւս արտերի պարարտացնելու մասին եթէ մտածում են էլ այնու ամենայնիւ ոչինչ չեն կատարում ասելով, թէ տաւարի աղքը վառւում է, իսկ ուրիշ նիւթ էլ չկայ, բայց այդ սիսալ է, որովհետեւ նիւթեր կան և հետեւեալներն են:—

Ա. Ամենասովորականն է տաւարի կամ առհասարակ անապնոց աղբը, որը մեզնում գործ են ածում իրեւ վառելիք, իսկ ձիու աղքը չորացնում և ցանում են անապնոց տակը (փէյլն) չոր և մաքուր պահելու համար: Ոչխարինն էլ գործ է ածում իրեւ վառելիք, բայց չնայելով այդ հանգամանքին, եթէ ամեն մի զիւղացի ունենար իւր համար որոշեալ տեղ— սղբանոց, մինչեւ անգամ շինուածքար ու կրով, այն ժամանակ նորան գժուար չէր լինի մի տարուայ ընթացքում հաւաքել այնտեղ այնքան աղք, որքան հարկաւոր էր իւրաքանչիւր տարի իւր հողերի մի մասը կանոնաւոր կերպով աղբելու համար: Այդ աղքը պատրաստելու համար զիւղացին յիշեալ աղբանոց պէտք է տանի:—

1) Տաւարիս ոչխարի և միւս անասնոց աղբերի մնացորդները, որովհետեւ ինչքան էլ որ վերցուի վառելու համար, այնու ամենայնիւ կմնայթէ ոչխարի տակից թէ միւս անասուններից գեռշատ աղբ, որը պէտք չի գալ վառելու համար և որը խառնուելով հողի հետ կորչում է գիւղացու համար:

2) Արտաքնօցներից մարդկային բոլոր արտաթորութիւնները, և այդ պատճառով անհրաժեշտ է որ գիւղացիք ձեռք քաշեն իւրեանց սովորութիւնից բացօթեայ և ոչ որոշ տեղ թեթեանալուց, այլ պէտք է ունենան կանոնաւոր արտաքնօցներ, որով հաւաքած և պահպանած կլինեն այդ թանգարին նիւթը:

3) Որտեղ գիշերում են կամ երկար ժամանակ հանդիսաւ են առնում ոչխարները և միւս առնասունները, այնտեղի հողից (իսկական աղբը վառելու համար վերցնելուց յետոյ), նոյնպէս և կոռնալի \* տեղից մի շերտ պէտք է կարել և աղբի մնացորդների հետ տանել աղբանոց, որովհետեւ յիշեալ շերտ հողը լի է աղբի հիւթով:

4) Պէտք է հաւաքել փողոցի և հայաթների (բագերի) ամենօրեայ սովորական աղբը (ժեկը), նոյնպէս էլ թռչնոց աղբը, որը ամենահարկաւորն է բամբակի համար, և տանել աղբանոց, նոյնպէս

\* Բա Խոյեցոց — բա սմասեղ:

և ամեն տեսակ կանաչ և չոր խոտեր և զանազան փտելու ընդունակ բաներ — ինչպէս են աշնան թափած ծառերի տերեները (լուսալլը), և նոյն իսկ բամբակի թփերը մանրացնելով տանել աղբանոց, որի օգուաներից մինն էլ այն կլինի, որ ամեն գիւղացու հայաթները նոյնպէս էլ զիւղի փողոցները միշտ մաքուր կլինին և վարակիչ հիւանդութիւններ յառաջ չեն գալ:

5) Աղբանոց պէտք է տանել նաև ամենօրեայ գոյացած մոխիրը (քիւլը), որով տաւարի աղբի և առ հասարակ վառած նիւթի օրգանական մասից միմիայն կզրկուենք, իսկ անօրդանական — միներալական մասը ամբողջապէս կվաստակենք արտերի համար:

6) Անասնոց մէզը, որը ի հարկէ չի կարող գործածուել վառելու համար, պէտք է հաւաքել գոմի մէջի փոսում (ճալաւում), որը հարկաւոր է շինել քար ու կրից, ինչպէս այդիների տաքարները, և գոնեա տաս օրը միանգամ մաքրել և տանել աղբանոց, նոյնպէս պէտք է վարուել և բագի մէջ գանուած ճալաւի վերաբերմամբ: Իսկ աղբանոցը ժամանակ առ ժամանակ պէտք է խառնել — բահով շուռ տալ, ամառը ջուր և անասնոց մէզ շաղ տալ վերան, որպէս զի չչորանայ և կանոնաւոր փառելով դառնայ միատեսակ զանգուած: Այսպիսով: ահա, կգոյանայ զիւղացու համար մէջ քանակութեամբ աղբ՝ որը կունենայ իւր մէջ զա-

նազան սննդարար նիւթեր ամեն տեսակ բոյսերի համար: Այսպէս պատրաստուած աղբը կոչում է կօմիուտ (КОМИОСТЬ):

Դրանից յետոյ գիւղայուն կմնայ իւր հողերը բաժանել մօտաւորապէս հաւասար մասերի և ամեն գարնան կամ աշնանը (նայելով թէ երբ պէտք է արտը ցանուի) նշանակուած մի մասը աղբի: Դեռ չփարած արտի երեսին նա պէտք է հաւասար փոխ աղբը և յետոյ վարելով հողի տակովն անի:

Բ. Այն աեղերում: որտեղ արտերը ջրւում են, ամեն գիւղի հանդի մէջ ամեն ուղղութեամբ տարած կան առուներ, որոնց մէջ գիւղում է աշագին քանակութեամբ տիղմ: այդ աիդմը, նոյնպէս և ճահիճների տղմերը կարելի է գործ դնել արտերի համար իբրև լաւ պարարտացնող նիւթ, որովհետեւ դոքա պարունակում են բայց միներալականից նաև շատ օրդանական նիւթեր: Այս տղմերը պէտք է կրել և փռել դեռ չփարած արտերի մէջ և ան-պատճառ թողնել որ չորանայ, փշրուի և օդով դիպչի, հակառակ գէպքում՝ մանաւանդ ճահիճների (ղորու) տղմի մէջ պարունակուած վնասակար թթու սաղաղրութիւնը կվնասի ցանելիք բոյսին: Տղմերն առհասարակ իւրեանց մէջ ունեն շատ սննդարար նիւթեր, բայց յիշեալ վնասակար թթու բաղադրութիւնը պէտք է քիմիապէս փոխուի կամ երկար մնալով օգի աղդեցութեան տակ, կամ կիր խառնելով տղմերի հետ:

Գ. Իբրև պարարտացնող նիւթ պէտք է գործածել նաև կիլլը և զաջը: Օրինակ սննդարար սկահողերում պէտք է գործածել զաջը ( $\text{Ca SO}_4 \cdot 2\text{H}_2\text{O}$ ) 10—15 փութ ամեն մի գեսեատինի համար. երբեմն էլ 30—40 փութ, բայց չայրած գաջ: Իսկ թթուած և ճահճային (Ճճճիմայ) հողերում պէտք է գործածել իբրև աղբ կիլլը ( $\text{Ca O}$ ): Բայցի այդ եօնջի և նոյն դասակարգի բոյսերի համար կիրը և գաջը համարեա անփոխարինելի նիւթեր են, որոնք երբեմն ուղղակի ծառայում են իբրև սընունդ, բայց աւելի կողմնակի կերպով նպաստում են բոյսին այս կամ այն նիւթից աւելի սնունդ ստանալու, որովհետեւ կրի, գաջի և նորա ուրիշ աղերի աղգեցութեամբ հողի միւս բազագրութիւնները խոնաւ հողի մէջ լուծուելու ընդունակութիւն են ստանում և դառնում են բոյսերի համար գիւղամարս. օրինակ, բոյսերը գաջի ներկայութիւնից հողում՝ ընդունում են հողից աւելի բորակյին բազագրութիւններ (протеин), քան գաջ չեղած ժամանակ:

Դ. Եթէ արտը կաւային է և պինդ, անհրաժեշտ է տանել սայլով արտի մէջ աւազ որով հողը թէ կփորփոշանայ և թէ կստանայ թէ և անմարս, բայց ապագային գիւղամարսի փոխուելու աննդի պաշար:

Կան շատ տեղ հանդերում ըիւլլուկ—մոխրակոյս կոչուած աեղեր ի հնուց մնացած, նոյնպէս

և ղումնալ (աւազոտ) կոչուած տեղեր—ահա այդ տեղերից հողը պէտք է կրել և կաւային արտերի մէջ շաղ տալ, որով արտը նիւթապէս և ֆիզիքապէս կլաւանայ: Վերջապէս, իրեւ աղբ կամ պարարտացնող նիւթ պէտք է գործ զնել այնպիսի տեղերի հողը, որտեղ երկար ժամանակ ցանք չէ եղած կամ ամենեին չէ մշակուած: Այզպիսի տեղերի հողի երեսի շերտը, որի վերաց երկար ժամանակ տաքութիւնը, օդը, ջուրը ազդել են, պէտք է կրել և շաղ տալ արտերի մէջ, որով հողը կը թարմանայ և նոր ոյժ կսամանայ:

Ե. Խորհուրդ ենք տալիս պարարտացնել կանաչով (зеленое употребление): Բոյսերը իւրեանց կազմակերպութեան համար պէտք եղած նիւթերը վերցնում են հողից և օդից, ուրեմն եթէ մի և նոյն բոյսը մենք ամբողջապէս փակցնենք հողի մէջ՝ դրանով մենք յետ տուած կլինենք հողին այն բոլորը, ինչ որ նրանից խուռած էր, և զեռ մի բան ել աւելի (օդից), միմիայն այն տարբերութեամբ, որ յետ տուածը կիմնի դիւրամարս և սննդարար: Դորս վերայ հիմնուած է արտերի կանաչով աղբելը: Այդ նպատակի համար պէտք է ցանել արտը լորիով, մաշով, ոլոռով և այլ այդ դասակարգի բոյսերով: Որոնք կարելի է ցանել հացահատիկները հնձելուց յետոյ—մի և նոյն ամառը և նոցա պըտուղը հաւաքելուց յետոյ՝ վարել գութանով և ակով անել մնացած բոլոր կանաչ թփերը, որոնք

փտելով հողի մէջ՝ կծառային իրեւ պատրաստի անունդ բամբակի կամ աղագայ ցանելիք բոյսի համար: Վերջապէս, իւրացներու, ուրեմն և իրենց փտելով կհարստացնեն. հողը բորակային բաղադրութեամբ, որը անհրաժեշտ է ամեն մի բոյսի համար:

Զ. Եօնչան (առւոյտն—լուսար) յայտնի է մեղնում իրեւ հողին ոյժ տուող բոյս և ամեն մի գիւղացի գիտէ, որ եօնչատեղում ինչ որ ցանի, առաս բերք կստանայ: Դա շատ հասկանալի է, որովհետև թէ եօնչան, թէ կորնկանը (էսպարցետъ), թէ երեքնուկը կամ սիրի-սիրին (ևևеръ), ինչպէս և վերոյգրեալ լոբին, ոլոռն ևլն. այդ դասակարգին պատկանող բոյսերը, շնորհիւ իւրեանց արմատներում ապրող խոշորացուցային կենդանիների՝ ընդունակ են օդից բորակածին իւրացներու, որով և հողն են հաղոստացնում: Բացի այդ՝ վարելուց յետոյ այդ բոյսերի (մանաւանդ եօնջի) ահազինքանակութեամբ արմատները փոտում են հողի մէջ: Այս հանգամանքը գիտնալուց յետոյ, գիւղացուն մնում է փոփոխակի մի և նոյն արտում ցանել գանազան բոյսերի շարքում և յիշեալ խոտերը, որով բոյսերը տարից տարի մինը միւսից յետոյ ցանուելով կօգտուեին նախորդ բոյսի հողում թողած անհարար նիւթերով, և այդպիսով արտի համար աղբը գոնեա կիսով չափ փոխարինուած կլիներ, շնորհիւ վերոյիշեալ բոյսերի ցանուելուն:

Ե. Վերջապէս այս բոլոր միջոցներից յետոյ,  
որոց գործ դնելը կախուած է երկրագործ գիւղա-  
ցու կամքից, աւելորդ չի լինի խօսել և արհես-  
տական աղբերի մասին:

Ներկայում կան գործարաններ, որոնք պատ-  
րաստում են զանազան բաղադրութեամբ պա-  
րարտացնող նիւթեր աղբեր, (նայելով թէ ինչ  
բոյսի համար պիտի գործ դրուի) ի միջի այլոց և  
սուսլերփոսֆատ կոչուած նիւթը, որը բամբակի  
համար ամենահարկաւորն է:

Այդ արհեստական աղբերը պատրաստուելով  
գործարաններում՝ ծախւում են մինչև անդամ  
գիւղացու համար ձեռնառ գներով, և քանի գը-  
նում հետզետէ արժանանում են՝ մնում է մի-  
այն՝ որ ձանապարհածախսը թանգ չնստի բերել  
տողի վերայ: Վերցիշեալ սուսլերփոսֆատը ոչ այլ  
ինչ է, եթէ ոչ փոսփորաթթուի միութիւնը զանա-  
զան նիւթերի (էլեմենտների) հետ (գլխաւորապէս  
CaH<sub>4</sub>(PO<sub>4</sub>)<sub>2</sub> և K<sub>2</sub>H<sub>4</sub>(PO<sub>4</sub>)<sub>2</sub>), որը բոյսերի մէջ, մաշ-  
նաւոնգ բամբակի մէջ, շատ կայ, իսկ հողե-  
րում քիչ քանակութեամբ է գտնուում այդ պատ-  
ճառով էլ պէտք է աշխատել՝ որ բամբակի արտում  
դրանից բաւականաչափ լինի: Ուստի ցանկացողը  
կարող է բերել տալ այդ նիւթը գործարաններից  
և նորանով աղբել բամբակի արտը:

Այդ սուսլերփոսֆատով աղբած հողում բամ-  
բակը տալիս է մեծ քանակութեամբ խոշոր-խոշոր

կորզովներ, որոնք հասնելով աւելի լաւ են բաց-  
ւում բամբակի մազիկներն էլ ստացւում են եր-  
կայն և շատ քնքոյշ յատկութեամբ. իսկ թփերը  
ընդունակ են լինում գիմագրելու վարակիչ հի-  
ւանդութիւններին:

Ամերիկայում բամբակի համար հողը աղ-  
բում են ի միջի այլոց զուանո կոչուած աղբով,  
որը բաղկացած է ծովային թռչունների ծերտից,  
վետուրներից, ոսկրներից և նոցա գէշերից, նաև  
ծովային զանազան կենդանիների գէշերից. բայց  
զուանո-ի գլխաւոր նիւթն է թռչունների ծերտը:  
Դուանո-ն մեծ քանակութեամբ գտնուում է ծո-  
վերի ափերում և կղզիներում: Թէպէտ և զուա-  
նո-ն ամեն երկրում գոյանում է համարեա միա-  
կերպ՝ բայց իբրև հետևանք տեղային կլիմայական  
հանգամանքների, բաղադրութեան և սննդարա-  
րութեան կողմից նոքա զանազանուում են միմեան-  
ցից. և այդ հիման վերայ զուանո-ն բաժանում  
են երկու տեսակի:

I) Տաք և չոր երկրներում գոյացած զուա-  
նո-ն, որը չորանալով մնում է քիմիապէս հա-  
մարեա անփոփոխ:

II) Տաք, բայց խոնաւ և անձրեւային երկր-  
ներում գոյացած զուանո-ն, որը պարբերաբար  
թրջուելով, տաքանալով և չորանալով՝ քիմիապէս  
փոխուում է, որովհետեւ յիշեալ հանգամանքից  
գոյացած գազերը – ինչպէս են ամիսակ (NH<sub>3</sub>),

ածխաթթուն (00<sub>2</sub>) ելն. ցնդում են օդի մէջ. իսկ միւս քիմիական աղերը, որոնք ընդունակ են ջրի մէջ լուծուելու կամ հալուելու՝ նոքա ևս ջրի հետ դնում կորչում են գուանօյի համար. ինչ էլ կը վերաբերի մնացած սննդարար նիւթերին՝ նոքա էլ դառնում են ջրի մէջ հալուելու անընդունակ և անմարս բոյսերի համար (գոյանում են գլխաւորապէս — Ca HPO<sub>4</sub> և K<sub>2</sub>HPO<sub>4</sub>): Իրեւ պարարտացնող աղը գերազաւում է 1 տեսակի գուանօն, որովհետեւ նորա մէջ մեծ քանակութեամբ պարունակուած վերև յիշուած սուպերֆոսֆատ աշերը, ինչպէս և միւս սննդարար նիւթերը, ընդունակ են հալուելու խոնաւ հողի մէջ և դիւրամարս են բոյսերի համար:

Մեզնում թռչունների ծերտեր և այլ մնացորդներ մեծ քանակութեամբ չկան, թէպէտ և եղածը անշուշտ կպատկանի 1 լաւ տեսակին. ուստի և եղածը աւելի լաւ է, ինչպէս վերև ասացինք, տանել աղբանոց \*:

Բամբակի արտը աղբանոցի կոմպոսիտ անուանած աղբով աղբելու համար, աւելի նպատակայարմար է նրան գալնանը ցելի երեսին հաւասար փռել որից յետոյ վարել չթով և ապա փոցիսել և ցանել իսկ թարմ աղբով աղբանած արտում եթէ անմիջապէս ցանուի՝ կաճեցնի աւելի իւր ծառը և տերենները (կհոռանայ) — լաւ պտուղ չի տայ և տուածն էլ կինի յատկութեամբ կոպիտ:

Վարուել այսպէս.— Աշնանը պէտք է աղբը տանել չվարած արտը և հաւասար հեռաւորութեան վերայ կոյտեր դնել, ամեն մի կոյտը մի սայլից (20—25 փութ), այն հաշուով՝ որ ամեն մի քառակուսի սաժէնի վերայ մի փութ գայ (մի խալուար հողի վերայ 5000 փութ):

Հետեւեալ գարնանը այդ կոյտերը պէտք է հաւասար փուել հողի երեսին և վարել գութանով 3—4 վերշոկ խորութեամբ, ուրեմն և ծածկելով աղբը այդ խորութեամբ. իսկ հետեւեալ աշնանը կամ օգոստոսի վերջերին՝ պէտք է նորից վարել գութանով, բայց 5—6 վերշոկ խորութեամբ, որով արդէն փառած աղբը 1—2 վերշոկ տակի հողի հետ շուռ կգայ: Իրանից յետոյ մնում է ցանելուց առաջ (գարնանը կամ աշնանը) չթել, փոցիսել և ցանել—նախ՝ կամ բոստան, կամ քնչիթ, կամ ցորեն, կամ գերջակ և ապա բամբակ. որովհետեւ բամբակը թարմ աղբով աղբանած արտում եթէ անմիջապէս ցանուի՝ կաճեցնի աւելի իւր ծառը և տերենները (կհոռանայ) — լաւ պտուղ չի տայ և տուածն էլ կինի յատկութեամբ կոպիտ:

Մի անգամ այսպէս աղբանած արտում կարելի է ցանել 3—5 տարի անընդհատ զանազան բոյսեր, առանց նորից աղբելու:

Արտերը կամ հողերը աղբելով՝ մենք նոցա մէջ շատացնում ենք բուսական և զանազան օրդանական բաղադրութիւնների քանակութիւնը

\* Զուտ բունոց աղբով (ծերտով) աղբելու համար հարկաւոր է գործ դնել մի խալուար տեղի համար 50—100 դ.:

(перегной), որով հողը մեծ ընդունակութիւն է ստանում ջուր կլանելու և պահելու իւր մէջ երկար ժամանակ:

Օրգանական մարմիններից գոյացած նիւթերից ջուր կլանելու և իւր մէջ պահելու ամենից աւելի ընդունակն է տաւարի աղբից գոյացածը: Սորանից հետեւում է, որ որքան արտը շատ աղբած լինի, ուրեմն և շատ մննդարար և փոփոլ լինի՝ այնքան աւելի նա ընդունակութիւն կունենայ խոնաւութիւն պահելու իւր մէջ. հետեւաբար և կարօտութիւն չի ունենայ յաճախ ջրուելու:

### ՅԱՆՔԱԾՐՁԱՆ (Ենօօբօրոտ):

Բամբակը, ինչպէս և ամեն մի բոյս, հողից ընդունում է ի միջի այլոց գլխաւորապէս որոշ քիմիական բազագրութիւններ, որոց հողի մէջ պարունակուած քանակութիւնից կախումն ունի մեր ստանալիք բերքի առատութիւնը: Ուրեմն եթէ ամեն տարի մի և նոյն տեղում անընդհատ ցանենք մի և նոյն բոյսը (առանց արտը աղբելու), այդպիսով մենք տարեցտարի հողը ուժասպառ կանենք գլխաւորապէս յիշեալ նիւթերի վերաբերութեամբ. և վերջապէս կհասնենք այն օրուան, երբ այդ հողում այլ ևս մի և նոյն բոյսը չի զօրանայ:

Այդ պատճառով ահա, մեզնում որտեղ հողի մեծ պակասութիւն կայ, ուրեմն և չի կարելի երար ժամանակ խամ թողնել (տօնօք) կամ ցել անել (չերնի նար—վարած), որ հողը ուժ ստանայ\*, ուստի և հողը մէկէն ի մէկ ուժասպառ չանելու համար պէտք է ցանել մի և նոյն արտում փոփոխակի զանազան բոյսեր—օրինակ. մի տարի բամբակ, միւս տարի ցորեն, երրորդ տարին գարի, և յետոյ նոյն արտը (աղբելուց յետոյ) նորից ցանել բամբակ և լն: Ուրեմն մի և նոյն տեղում ցանեսում է կրկին, մի և նոյն բոյսը երեք տարուց յետոյ: Հետեւաբար մի և նոյն բոյսը վերադառնում է կրկին իւր հին տեղը մի որոշ քանակութեամբ արտերում ցանուելուց յետոյ, կամ մի որոշ տարիներից յետոյ. այլ կերպ ասած—մի և նոյն բոյսը կրկին իւր հին տեղն է վերադառնում մի որոշ

\* Հողի խամ կամ ցել բողնելուց ոյժ ստանալը բացատրում է այսպէս: — Հողի մեջ պարունակուած բոլոր սննդարար նիւթերի գումարը (ֆիոհծ) բաժանում է զյաւորապէս երկու—դիւրամար և մասերի (բոյսերի համար): Երբ ամեն տարի արտը ցանուելով գրկուում է վերջապէս յիշեալ դիւրամար մասից՝ այն ժամանակ մի տարի խամ անելի նպասակայամար է ցել բողնելով: հողի մէջ գտնուած սննդարար նիւթերի գումարի անմարս մասը օդի գործիչների ազդեցութեամբ մասամբ վերափոխուում է դիւրամարի որով եւ հողը դառնում է սննդարար—ոյժ է սահնում: Բայց խամ կամ ցել բողնելով առանց աղբերու, դարձեալ մենի ժամանակով հողը բոլորովին կնամակացնեն:

շրջանից յետոյ. և ահա այդ որոշ շրջանը՝ ցանուելիք բոյսերի վերաբերութեամբ, կոչում է «ցանքաշրջան»:

Ցանքաշրջանի որոշումը կախումն ունի ցանուելիք բոյսերի քանակութիւնից (տեսակներից). և համաձայն դորան երկրագործը իւր հողերը պիտի բաժանէ այնքան մասերի, որքան զանազան բոյսեր ունի ցանելու:

Վերոյիշեալ գէպքում հողերը պիտի բաժանուեն երեք մասի՝ մի մասում ցանուի բամբակ, միւս մասում ցորեն, երրորդ մասում գարի, իսկ հետեւալ տարին՝ ցորենը կըռնի բամբակի տեղը, գարին ցորենի տեղը և գարու տեղը աղբելուց յետոյ կըռնի բամբակը և այսպէս կշարունակուի անվերջ, մինչև որ տեղային անտեսական հանգամանքները կպահանջեն փոխել այդ կանոնաւոր շրջանը, կազմելով նորը:

Այս կկոչուի «Եռարտեան» կամ «Եռամեայ, ցանքաշրջան»: Սորանից պարզ է, որ ցանքաշրջանը կլինի երկամեայ, եռամեայ, քառամեայ ևն. (կամ երկարտեան, եռարտեան, քառարտեան ևն.):

Ամեն մի երկրագործ անհրաժեշտ պիտի համարի կանոնաւոր ցանքաշրջան ունենալ, որովհետեւ ցանքաշրջանն ունի ի միջի այլոց և հետեւալ լաւ կողմերը.— 1) Ցանքաշրջանով մենք մի որոշ չափով փրկում ենք հողը ուժասպառ լինելուց, որովհետեւ ցանուած բոյսը, ինչպէս վերև ասացինք:

Վերցնում է գլխաւորապէս իրեն հարկաւոր սնընդարար նիւթերը, իսկ հետեւալ բոյսի համար հարկաւոր նիւթերը, գրեթէ չպակսելով հանգերձ, շատանում են մի տարուայ ընթացքում ի հաշիւ ֆօնիի (ընդհանուր պաշարի գումարից), հետեւաբար ամեն մի հետեւալ ցանելիք բոյսը կտնի հոգում իւր համար պատրաստի սնունդ:

2) Որովհետեւ ցանուելով ամեն տարի մի ևնոյն բոյսը մի ևնոյն տեղում, որտեղ որ և իցէ մի ցանով հիւանդանալով թողնում է արտում հիւանդութեան սկզբունքները կոմ սերմերը, որով հետևեալ տարին նորից վարակում է, ուստի և ցանքաշրջանով մենք հեռացնում ենք բոյսին իւր հիւանդութիւնից:

3) Նպատակայարմար կազմած ցանքաշրջանով արտերի աղբելու պահանջը որոշ չափով պակասում է, մանաւանդ՝ եթէ հնարաւորութիւն կայ ցանքաշրջանի մէջ թողնել և ցել. օրինակ—բամբակ, ցորեն, գարի, ցել. և յետոյ գարձեալ բամբակ և այլն:

Նպատակայարմար ցանքաշրջան կազմելու համար պէտք է աշքի առաջ ունենալ ամեն մի բոյսի պահանջը—գիտենալ թէ ի՞նչ բոյս ի՞նչ բոյսից յետոյ կարող է լաւ զօրանալ և առատ բերք տալ՝ և նոցա պէտք է շարել այնպէս, որ միմեանց փոխանակող բոյսերը պահանջ ունենան հո-

դից՝ բացի այդ՝ հողից շատ պահանջ ունեցող բոյսերը պիտի լինեն ցանքաշրջանում նախադասութենակ հակառակն:

Բացի այդ՝ գիտենալով, որ մի քանի բոյսեր (կրկնում եմ), ինչպէս են եօնջան (լոզերնա), կորընկանը (էսպարցետ), երեքնուկը կամ սիրի-սիրին (կլևեր) \* և լու հողերը հարստացնում են օդի բորակածնով (ազոտ) և նորա քիմիական միութիւններով (այդ պատճառով էլ այդ բոյսերը կոչւում են բորակածին հաւաքողներ), նոյնպէս և իրենց մեծ քանակութեամբ հողում թողնելիք արմատներով և այլ մնացորդներով. ուստի պէտք է աշխատել որքան հնարաւոր է, ցանքաշրջանում զետեղել և այդ խոտերից որ և է մինը, որով կիսով չափ հողը կարելի է համարել աղբած:

Մեզնում ժողովրդի համոզմունքն է, որ բըրընձից (չալթուկից) յետոյ արտից լաւ բերք կրստացուի, և այդ Ճիշտ է. որովհետեւ բըրինձն էլ ահագին քանակութեամբ մնացորդներ է թողնում արտում: բայց զգուշացնում ենք, որ չալթկի հողը միշտ թմուած է լինում և երկար ժամանակ չը

\* Մեզնում երեմուկի կամ սիրի-սիրի խոհ միմիայն մի տեսակն է յայտնի, այն է վայրենի կարա տեսակը, որը ձևուեցուի լի լինի ցանել. բայց կան երեմուկի լաւ տեսակներ, որոնք առաջերբ կտան. — ցանեկացողի համար դժուար չի լինի անրմի բնելը տալլ:

տակ գտնուելով շատ ամրացած է լինում: իսկ բամբակը պահանջում է վափուկ հող, ուստի անհրաժեշտ է բըրնձի հողը վարել գութանով գոնեա 6—7 վերշով խորութեամբ և վարը կրկնել չթով (եթէ ոչ գութանով) մի տարուայ ընթացքում ևս երկու անգամ, որպէս զի հողը օդին տրուի և իւր թրթւութիւնը կորցնի — այնուշեւ միայն այդ արտից կստացուի առատ բերք:

Այս բայցը ընթացքում լուսավ է կարծար գործադրութեամբ շահագործութեամբ և այս մեջ եւ եւ համար.

Քառամեայ կամ քառարտեան ցանքաշրջան.

| I | Բամբակ | Քնջիթ | Ցորեն | Գարե |
|---|--------|-------|-------|------|
| 1 | 2      | 3     | 4     | 5    |

| II | Բամբակ | Ցորեն | +<br>Գարե<br>Եօնջալ | Եօնջալ | Եօնջալ | Եօնջալ | Քնջիթ | Բուսան |
|----|--------|-------|---------------------|--------|--------|--------|-------|--------|
| 1  | 2      | 3     | 4                   | 5      | 6      | 7      | 8     | 9      |

Իննամեայ կամ իննարտեան ցանքաշրջան.

Բայց որպէս զի այս ամենապլիսաւոր կէտում սխալ գործած չլինենք, և առաջ բերած ցանքաշրջանները նպատակայարմար և մեր երկրի կրթմային, հողային, տնտեսական և զանազան տեղական պայմաններին համապատասխանող լինին՝ դիմեցինք մեզնից տնկեղծ յարգուած Ռւմանի մեր երկրագործական ուսումնարանի պ. Տեսուչ Դ. Ս. Լեանդին, գրելով նորան մեր կազմած վերպյդրեալ ցանքաշրջանները, և խնդրելով նորա կարծիքը և օգնութիւնը այդ մասին, տեղեկացնելով նաև տեղական դորա համար անհրաժեշտ մի երկու պայմանների մասին:

Յարգելի Տեսուչը սիրով պատասխանեց ընդգալձակ գրութեամբ, որի մէջ առաջ բերելով զանազան աղբիւրներից քաղուածներ բամբակի մշակութեան մասին և մի ընդհանուր տեսութիւն անելուց յետոյ՝ գրում է վերոյգրեալ ցանքաշրջանների մասին, որով ցանքաշրջաններից 1-ը լաւ է համարում փոխել այսպէս 1) ցել, 2) թամբակ, 3) ընջիթ, 4) ցորեն եւ 5) զարի: Այսինքն անհրաժեշտ է համարում գարուց յետոյ—բամբակից առաջ մի տարի ցել թողնել, երբ ցանքաշրջանը առանց աղբելու է մնում: իսկ եթէ արտը աղբենք այն ժամանակ կարելի է և առանց ցել թողնելու այսպէս 1) ընջիթ+աղբ, 2) բամբակ, 3) ցորեն, 4) զարի:

Իսկ 11-ը պ. Տեսուչը համարում է շատ լաւ

մեր երկրի համար: Եւ որովհետև ես գրած էի թէ տեղացի երկրագործ դասի ասելով եօնջէն կանոնաւոր բերք է տալիս մի և նոյն տեղում 7—10 տարի և թէ նրանից յետոյ մի և նոյն տեղում կարելի է ցանել եօնջայ 6—10 տարուց յետոյ, հակառակ գէպքում եօնջէն լաւ բերք չի տայ, ուստի պ. Տեսուչը գրում է ինձ իւր կազմած ցանքաշրջանները, որոնք ես համարելով աւելի համապատասխանող մեր երկրի պայմաններին, քան իմ կազմածները, անհրաժեշտ եմ համարում առաջ բերել այստեղ ամբողջութեամբ իւրեանց բացատրութիւններով: Նա գրում է.—

«Հստ իս Զեր 11 ցանքաշրջանը շատ լաւ է, բայց դուք ասում էք, որ եօնջէն 7—10 տարի մի և նոյն տեղում տալիս է շարունակ լաւ բերք, բայց 6—10 տարուց յետոյ նա պիտի գառնայ իւր հին տեղը, այդ գէպքում պէտք է կազմել ցանքաշրջան, եօնջի արտը ունենալով իբրև «յաւելուած արտ» ցանքաշրջանի:»

# Ա Հ Ե Ւ Ս Ա Կ Ա Ս

| Տարե-<br>րությը | Հողեւթ բաժանուած մաս մաս արտերի<br>համարներով. |        |        |        |             |        |
|-----------------|--|--------|--------|--------|-------------|--------|
|                 | I  | II     | III    | IV     | V           | VI     |
| 1898            | Բամբակ   | Քնջիթ  | Ցորեն  | Գարի   | Բոստան      | Եօնջայ |
| 1899            | Քնջիթ  | Ցորեն  | Գարի   | Բոստան | Բամբակ      | Եօնջայ |
| 1900            | Ցորեն  | Գարի   | Բոստան | Բամբակ | Քնջիթ       | Եօնջայ |
| 1901            | Գարի   | Բոստան | Բամբակ | Քնջիթ  | Ցորեն       | Եօնջայ |
| 1902            | Բոստան   | Բամբակ | Քնջիթ  | Ցորեն  | Գարի        | Եօնջայ |
| 1903            | Բամբակ   | Քնջիթ  | Ցորեն  | Գարի   | Բոստան      | Եօնջայ |
| 1904            | Քնջիթ  | Ցորեն  | Գարի   | Բոստան | Բամբակ      | Եօնջայ |
| 1905            | Ցորեն  | Գարի   | Բոստան | Բամբակ | Քնջիթ       | Եօնջայ |
| 1906            | Գարի   | Բոստան | Բամբակ | Քնջիթ  | Ցորեն       | Եօնջայ |
| 1907            | Բոստան   | Բամբակ | Քնջիթ  | Ցորեն  | Գարիենօնջայ | Եօնջայ |
| 1908            | Բամբակ   | Քնջիթ  | Ցորեն  | Գարի   | Եօնջայ      | Բոստան |
| 1909            | Քնջիթ  | Ցորեն  | Գարի   | Բոստան | Եօնջայ      | Բամբակ |
| 1910            | Ցորեն  | Գարի   | Բոստան | Բամբակ | Եօնջայ      | Քնջիթ  |
| 1911            | Գարի   | Բոստան | Բամբակ | Քնջիթ  | Եօնջայ      | Ցորեն  |
| 1912            | Բոստան   | Բամբակ | Քնջիթ  | Ցորեն  | Եօնջայ      | Գարի   |
| 1913            | Բամբակ   | Քնջիթ  | Ցորեն  | Գարի   | Եօնջայ      | Բոստան |
| 1914            | Քնջիթ  | Ցորեն  | Գարի   | Բոստան | Եօնջայ      | Բամբակ |

ԾԱՆՈԹ. — Այսէն, երկ հաւրկաւոր լինի, պէս և աղբէ բամբակի հախորդ բոյը — բռուտանը, եւ ամբողջ ցանցաշրջանում մի անգամ բարձրանի է, որովհետեւ 7 կամ 10 տարուան հօնցաւոր մասնելով ցանցաշրջանի մէջ՝ ծառայում է իրեւ աղբած *արտ*:

«Յառաջ բերած Ա աղիւսակից երեսում է, որ  
ցանքաշրջանը 10 տարուայ ընթացքում (1898  
— 1907 թ.) կատարուեմ է 5 կառու արտերում:  
իսկ 6-րդ արար 10 տարի շարունակ բռնուած է,  
եօնջայսփ: Որպէս զի եօնջէն տեղափոխուի ուրիշ  
արած հարկաւոր է օր առաջ ցանել գարու տակ:  
Այս օրինակում եօնջէն ցանուած է գարու տակ  
1907 թուին № V արառում: և 1908 թ-ից այդ  
արար դառնում է ցանքաշրջանի համար իրրե  
յաւելուած ալու եօնջի (եօնջատեղի): իսկ № VI  
արար մտնում է ցանքաշրջանի մէջ»:

Մեր գիւղացոց ասելով եօնջէն թէև ապրում է  
մի և նոյն տեղում 10 տարի, բայց լաւ բերք է  
տալիս մինչև 6-7-րդ տարիները, որից յետոյ  
սովորաբար եօնջէն վարւում է, այդ պատճառով  
էլ պ. Տեսչի գրութեան հետեւալ շարունակու-  
թիւնը մեզ համար ես աւելի պիտանի է: Սա  
գրում է:—

«Եթէ եօնջէն իւր տեղում տաս տարի շառաւնակ չապրի, այլ միմիայն օրինակ 7 տարի (որից յետոյ պառաւած լինի), այն ժամանակ եօթներորդ տարին այսինքն 1904 թուականին № III արտում գարու տակ պէտք է եօնջայ ցանել և 1905 թուականից այդ № III արտը կդառնայ ցանքաշրջանի համար «յաւելուած արտ» (եօնջատեղի): «Այսպիսով՝ եթէ այս վեց արտերից մէկում եօնջէն կմնայ 10 տարի շարունակ, այն ժամանակ

նա կվերադառնայ իւր հին տեղը  $6 - 1 = 5 \times 10 = 50$   
տարուց յետոյ. իսկ եթէ կֆնայ մի և նոյն տեղում  
Դ տարի, այն ժամանակ կվերադառնայ իւր հին  
տեղը  $6 - 1 = 5 \times 7 = 35$  տարուց յետոյ»:

«Բայց այս ցանքաշրջանում, որը ունի իւր  
լաւ կողմերը, բոյսերը իւրեանց բռնած տարածու-  
թեամբ պահանջուած որոշ յարաբերութեան մէջ  
չեն, այսպէս».

| Զեր<br>Ցանքաշրջանում | Իմ            |               | Իմում          |               | Իմում<br>աւել է<br>պակասէ |
|----------------------|---------------|---------------|----------------|---------------|---------------------------|
|                      | Տար           | Տար           | Տար            | Տար           |                           |
| 1) Բամբակը բռնած     | $\frac{4}{9}$ | $\frac{1}{6}$ | $\frac{1}{18}$ | $\frac{1}{6}$ |                           |
| 2) Ցորենը            | $\frac{4}{9}$ | $\frac{1}{6}$ | $\frac{1}{18}$ | $\frac{1}{6}$ |                           |
| 3) Գարին             | $\frac{4}{9}$ | $\frac{1}{6}$ | $\frac{1}{18}$ | $\frac{1}{6}$ |                           |
| 4) Քնջիթը            | $\frac{4}{9}$ | $\frac{1}{6}$ | $\frac{1}{18}$ | $\frac{1}{6}$ |                           |
| 5) Բոստանը           | $\frac{4}{9}$ | $\frac{1}{6}$ | $\frac{1}{18}$ | $\frac{1}{6}$ |                           |
| 6) Եօնջէն            | $\frac{4}{9}$ | $\frac{1}{6}$ | —              | $\frac{5}{8}$ |                           |

Ուստի՝ եթէ ցանկալի է Եօնջատեղը մեծաց-  
նել այն ժամանակ կարելի է 6 արտերից 2-ը ցա-  
նել Եօնջայ. իսկ 4-ի վերայ կատարել ցանքաշրջան  
չորս բոյսերից. և երբ Եօնջի բերքը պակասի կամ  
ինչպէս ասուում է՝ Եօնջէն պառաւի, այն ժամա-  
նակ կարելի է Եօնջէն տեղափոխել ցանքաշրջանի  
2 արտի վերայ, իսկ պառաւած Եօնջէքի երկու  
արտերը մացնել ցանքաշրջանի մէջ։ Ահա օրինակը՝  
արտերը մացնել ցանքաշրջանի մէջ։

## Ա. Ղ Ի Ւ Ա Կ Բ.

| Տարե-<br>րուեր. | Հոգերը բաժանուած մաս մաս արտերի<br>համարներով. |        |             |        |        |        |
|-----------------|--|--------|-------------|--------|--------|--------|
|                 | I  | II     | III         | IV     | V      | VI     |
| 1896            | Ցորեն  | Բոստան | Բամբակ      | Քնջիթ  | Եօն    | Չայ    |
| 1897            | Ցորեն  | Բամբակ | Քնջիթ       | Ցորեն  | Եօն    | Չայ    |
| 1898            | Բամբակ   | Քնջիթ  | Ցորեն       | Բոստան | Եօն    | Չայ    |
| 1899            | Քնջիթ  | Ցորեն  | Բոստան      | Բամբակ | Եօն    | Չայ    |
| 1900            | Ցորեն  | Բոստան | Բամբակ      | Քնջիթ  | Եօն    | Չայ    |
| 1901            | Բոստան   | Բամբակ | Քնջիթ       | Ցորեն  | Եօն    | Չայ    |
| 1902            | Բամբակ   | Քնջիթ  | Ցորեն       | Բոստան | Եօն    | Չայ    |
| 1903            | Քնջիթ  | Ցորեն  | Բոստան      | Բամբակ | Եօն    | Չայ    |
| 1904            | Ցորեն  | Բոստան | Բամբակ      | Քնջիթ  | Եօն    | Չայ    |
| 1905            | Բոստան   | Բամբակ | Գարի        | Ցորեն  | Եօն    | Չայ    |
|                 |  |        | տակը Եօնջայ |        |        |        |
| 1906            | Բամբակ   | Քնջիթ  | Եօն         | Չայ    | Ցորեն  | Բոստան |
| 1907            | Քնջիթ  | Ցորեն  | Եօն         | Չայ    | Բոստան | Բամբակ |
| 1908            | Ցորեն  | Բոստան | Եօն         | Չայ    | Բամբակ | Քնջիթ  |
| 1909            | Բոստան   | Բամբակ | Եօն         | Չայ    | Քնջիթ  | Ցորեն  |
| 1910            | Բամբակ   | Քնջիթ  | Եօն         | Չայ    | Ցորեն  | Բոստան |
| 1911            | Քնջիթ  | Ցորեն  | Եօն         | Չայ    | Բոստան | Բամբակ |
| 1912            | Ցորեն  | Բոստան | Եօն         | Չայ    | Բամբակ | Քնջիթ  |
| 1913            | Բոստան   | Բամբակ | Եօն         | Չայ    | Քնջիթ  | Ցորեն  |
| 1914            | Բամբակ   | Քնջիթ  | Եօն         | Չայ    | Ցորեն  | Բոստան |
| 1915            | Գարի   | Ցորեն  | Եօն         | Չայ    | Բոստան | Բամբակ |
|                 | տակը Եօնջայ                                    |        |             |        |        |        |
| 1916            | Եօն  | Չայ    | Ցորեն       | Բոստան | Բամբակ | Քնջիթ  |
| 1917            | Եօն  | Չայ    | Բոստան      | Բամբակ | Քնջիթ  | Ցորեն  |

և այսպէս շարունակել:

ԵԱՆՈԹ. — Այսէղ, եթէ պէտ լինի, պէտ և աղբել բամ-  
բակի նախորդ բոյսը բոստան. եւ ամբող ցանքաշրջանում մի  
անգամ բարձրական ու որովհինեւ. 7 կամ 10 տարուան եօնջատեղը  
մտնելով ցանքաշրջանի մէջ՝ ծառայում է իրեւ աղբած արտ։

«Այս վեց արտերի վերայ կատարւում է քառարտեան կամ քառամեայ ցանքաշրջան (բամբակ, քնջիթ, ցորեն և բոստան. գալին բացակայում է, որովհետեւ եօնջատեղին շատացրած է), իսկ 2 արտերը (V և VI) 10 տարի շարունակ եօնջովքը բըռնուած են: 10 տարուց յետոյ (իսկ եթէ հարկաւոր է աւելի շուտ) եօնջէն տեղափոխուում է հետեւալ 2 արտերի վերայ (III և IV). իսկ պառաւած եօնջատեղերը (V և VI) մտնում են ցանքաշրջանի մէջ (1906—1915): 1916 թուականում մտնում են ցանքաշրջանի մէջ III և IV արտերը, իսկ եօնջէն տեղափոխուում է I և II արտերի վերայ, որտեղ մնում է 10 տարի (կամ պակաս), այսինքն 1916—1926 թուականը, որից կամ յետոյ դարձեալ տեղափոխուում է V և VI արտերի վերայ — հետեւաբար վերադառնում է իւր հին տեղը 20 տարուց յետոյ»:

«Իմ երկրորդ ցանքաշրջանում եօնչատեղը շանգամ աւելի է քան իմ առաջին ցանքաշրջանում՝ բայց գորտ փոխարէն չկայ գարին, որը ես մէջ եմ բերում քնջթի փոխարէն միմիայն 1905, 1915, 1925 թուականներում (10 տարին մի անգամ), որպէս զի տակը եօնչայ ցանուի. իսկ եթէ գարին անհրաժեշտ լինի՝ այն ժամանակ որ և է մի արտի կէսը կարելի է գարի ցանել — օրինակ ցորենինը. և այդ գէպքում քառարտեան ցանքաշրջանը կլինի այսպէս. —

|                   |                   |          |              |
|-------------------|-------------------|----------|--------------|
| 1) Բոստան         | 2) Բամբակ         | 3) Քնջիթ | 4) Ցուենդարի |
| $\frac{1}{2}$ արտ | $\frac{1}{2}$ արտ |          |              |

իսկ եթէ գալին աւելի հարկաւոր է քան  
քնջիթը՝ այն ժամանակ քնջիթի տեղը կարելի է  
ամբողջապէս ցանել գալի՛ Առհասարակ «յաւելլուած  
խոտային արտերի» օգնութեամբ կարելի է չափա-  
զանց շատ տեսակների փոփոխել ցանքաշըջանները»:

Այս բոլորից յետոյց պ. Տեսուը խորհուրդն է տալիս ինձ շատացնել մեզնում գերջակի (քլեպտանա—Ricinus) ցանքերը, որին այժմ մեծ պահանջ կայ: Մի խալուար լաւ մշակուած և սննդարար հողից կարելի է ստանալ մինչև 400 փութ գերջակի-սերմ, որի փութը ինչպէս յարգելի Տեսուը գրում է, Մոսկվայում արժէ մօտ 2 րուբլի: Եթէ տեղումն գերջակի փութը հաշուենք 1 լուրջի, այն ժամանակ ամեն մի խալուար տեղից կստացուի մօտ 400 րուբլի: ակնյայտնի է, որ գերջակից մեծ օգուտ կստացուի, ուստի խորհուրդն քաղաքացին մեր երկրագործներին վերոյգրեալ ցանքաշրջաններում քննիլի փոխարէն գերջակ ցանել: Գերջակը կարելի է մշակել բամբակի նման, միմիայն այն ցանքանութեամբ, որ գերջակի թփերը աւելի հեռու պիտի լինին միմեանցից, քան բամբակինը: Կան մեզնում գիւղեր՝ որտեղ մարդագլուխուուննեն  $1 - 1\frac{1}{2}$  սոմար հող (500 քո սաժէն), որով

նոքա պարտաւորուած են ապրել. այդպիսի տեղերում աւելի նպատակայարմար կլինի դիմել այսպէս կոչուած «ազատ սիստէմի» (вольная система) տնտեսութեան, որով երկրագործը թէև պարտաւորուած կլինի աւելի աշխատանք և ծախս անել, բայց նորանից կախուած կլինի մի և նոյն արտում ցանել՝ ինչ որ կամենայ, միմիայն այս դէպքում արտերը պէտք է ամեն տարի աղբել:

### ՍԵՐՄԻ (ՀՈՒՆԻ) ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.

Սերմի ընտրութիւնը լինում է հետեւեալ կերպով.—Ծանելու համար նշանակուած կոյտից վերջնում են մի բուռը և նոցանից 10 հատ կրտրում են դանակով ընդ լայնութեամբ. եթէ սերմերը կտրած տեղում սպիտակ են և սև կամ դարչնագոյն բծերով կնշանակի, որ նոքա առողջ են և պիտանի ցանքի համար. իսկ եթէ նոքա կրտրած տեղում մութ, դեղին կամ թուխ կարմիր գոյն ունեն, կնշանակի որ վնասուած են (տխապած են). և պիտանի չեն ցանքի համար. Եթէ 10-ից միայն 3—4 հատն են վնասուած՝ այն ժամանակ այդ սերմը կարելի է ցանել (եթէ ի հարկէ աւելի լաւը չկայ). բայց սովորական չափից համարեա 2 անգամ աւելի պէտք է ցանել. իսկ եթէ 10 հատից աւելի

քան 3—4 վնասուածներ կան, այն ժամանակ նոքա պիտանի չեն ցանքի համար:

### ՍԵՐՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ.

Յանելուց առաջ բամբակի սերմերը պէտք է առանձնացնել միմեանցից, որովհետև նոքա իրենց վերայ գանուած մազիկներով կպչում են միմեանց, որով և անհնարին է դառնում հաւասար ցանելը: Դորա համար հունտը թրջում են ջրով, խառնում են մանր աւազի և մոխրի հետ և սկսում են թիակով շուռ տալ և խառնել այնքան, մինչեւ որ սերմերը շրջապատուելով մոխրով և աւազով կանշատուեն միմեանցից:

Աւելի լաւ է սերմերը պատրաստել հետեւեալ կերպով.—պատրաստել թրքաջուր, որը թլիքի հետ պիտի մնայ մօտ 10 օր, որից յետոյ թրքաջուրը բաժանելով պինդ մասից, պէտք է խառնել նորա հետ ամեն մի վերջոյին մի բուռը սովորական աղ (NaCL), և լաւ խառնելուց յետոյ՝ թրջել նորա մէջ բամբակի հունտը 1—2 օր. յետոյ հանել և խառնել մոխրի հետ և վարուել վերյագրեալ կերպով.—այնուհետեւ մնում է տանել ցանել: Այս դէպքում հունտը աւելի շուտ կծլի և անմիջապէս կգտնի

իւր մօտ մոխիր և թրքաջրի նիւթ, որոնցով որ-  
նունդ կստանայ մինչև արմատների գործելը:

Յ Ա Ն Ք Ը.

Կայելով տեղային կլիմայական հանգամանք-  
ներին բամբակների ցանքը զանազան երկրներում  
լինելու է զանազան ժամանակ:

Որտեղ մարտ ամսից յետոյ ցրտերը — պարզկա-  
ները բոլորովին դադարում են, այնտեղ բամբակ  
կարելի է ցանել ապրիլի 1-ից. իսկ աւելի ցուրտ  
տեղերում, ինչպէս և մեղնումն պէտք է ցանել  
աւելի ուշ: Բամբակի ցանքերը կարող են լինել  
մինչև մայիսի 10-ը, որից ուշ ցանելը անօդուտ է:  
Մեզնում պէտք է ցանել բամբակը մօտաւորապէս  
ապրիլի 15-ին:

Եթէ շտապենք շուտ ցանել, այն ժամանակ  
կպատահի, որ ցրտերը կրկնուելով կսղմեն, որից  
բամբակը թէ ուշ կծլի և թէ ծլելուց յետոյ ճըռ-  
զած կլինի և դանդաղ կտձի. իսկ այդպիսի հան-  
գամանքում՝ առհասարակ բամբակի վերայ բազ-  
մանում են միջատներ, որոնք մեծ վնաս են պատ-  
ճառում բոյսի առողջութեանը, ուրեմն և ապա-  
գայ արդիւնաբերութեանը:

Հետևաբար աւելի լաւ է աշխատել մի փոքր

ուշ ցանել — այս գէպքում սերմերը ընկնելով տա-  
քացած և խոնաւ հողի մէջ՝ ծլում են արագ և  
հաւասար, և արագ աճելով լրացնում են և կոր-  
ցըրած ժամանակը: Ցանել պէտք է անպատճառ  
տաք, խոնաւ և փորփոշ հողում:

Ցանելուց պէտք է աշքի առաջ ունենալ  
երկու դէպք:

ա. Երբ բամբակը ցանւում է գեմի տեղե-  
րում — որտեղ ջրելու անհրաժեշտութիւն չկայ:

բ. Որտեղ բամբակը առանց ջրելու չի կարող  
ապրել, ինչպէս մեզնում:

ա. գէպքում — որտեղ հողը ունի բնական  
խոնաւութիւն և անձրեները սակաւ չեն, ուրեմն  
և ջրելու ոչ միայն անհրաժեշտութիւն չկայ, այլ  
և շատ գէպքերում պէտք է աշխատել աւելորդ  
խոնաւութիւնից ազատուել, այդպիսի տեղերում  
պէտք է վարուել հետեւեալ կերպով: — Հողը վերև  
նկարագրած կերպով պատրաստելուց յետոյ՝ պէտք է  
թմբեր կազմել մեր սովորական մարկոսով՝ մօտա-  
ւորապէս մի (1) արշին հեռաւորութեամբ մինը  
միւսից: Նայելով երկրի խոնաւութեան՝ թմբերը  
պէտք է կազմուեն աւելի կամ պակաս բարձրու-  
թեամբ և հաստութեամբ: Այս թմբերի վերայ  
ահա, պէտք է ցանուի բամբակը ձեռքով, մօտա-  
ւորապէս կէս (1/2) արշին հեռաւորութեան վե-  
րայ, սերմը սերմից: Որովհետև խոնաւ և տաք  
երկրներում բամբակը աճում է շատ փարթամ,

ուստի և արուած տարածութիւնը բոլորովին կը  
ծածկուի բամբակի թփերով և բաց տեղ չի մնայ:  
իսկ եթէ գեմի տեղերում արտը գտնւում է զա-  
ռիվայր տեղում որտեղից ջրերը սրբնթաց հոսելով  
կորչում են, վերոյիշեալ թմբերի փոխարէն պէտք է  
պատրաստել փոքրիկ առուներ ջրի հոսանքի հա-  
կառակ ուղղութեամբ (որպէս զի ջուրը կարողա-  
նայ ծծուել հողի մէջ), և այդ առուների կողքին  
պէտք է ցանել բամբակը:

Ա. դէպքում—որտեղ առանց ջրելու կուլ-  
տուրական ոչ մի բոյս անգամ չի կարող կատարեալ  
աճել՝ ինչպէս մեր Երևանեան նահանգում շատ  
տեղ, պէտք է վարուել այսպէս:—Արտի մի ծայրից  
պիտի գնայ չութը, որը պէտք է յարմարեցրած  
լինի վարելու մօտաւորապէս մի վերշոկ խորու-  
թեամբ—կամ այսպէս ասած՝ չթով մի զիծ պէտք է  
բանալ. չթի ետևից պիտի գնայ ցանք անողը և  
ցանի ակօսի կողքին բամբակի սերմերը կարգով։  
Հետևեալ կարգը (Չերկէն) պիտի լինի երրորդ ակօսը  
(մինը մէջ տուած) ելն։ Սերմերը կծածկուեն նոյն  
չթով հետևեալ ակօսը անելուց. կարելի է ծած-  
կել և մարդով, որը պիտի կատարի այդ գործո-  
ղութիւնը թիակով կամ ձեռնափոցինի ետևով,  
բայց գիտնալով՝ որ սերմերը պիտի ծածկուեն ոչ  
աւելի քան մի (1) վերշոկ (աւելի լաւ է պակաս)  
խորութեամբ։

Ցանելը լինում է երեք տեսակ. — ա. հասա-

բակ շաղ տալով—ցինելով, թ) կարգով կամ շար-  
քով և զ) սուն-սուն:

Ա. ձեր, որը մեզնում դժբաղդաբար ըն-  
դունուած է իբրև միակ ձեր ցանելու, այսպէս է. —  
ցանողը կապում է մի մեծ գոգնոց իւր վերայ,  
լցնում է հնառով և բուռ-բուռ շաղ է տալիս կամ  
ցփնում է արտի մէջ, որից յետոյ փոցիով ծած-  
կում են սերմերը։ Այս ձեր ունի շատ պակասու-  
թիւններ։

1) Անհամեմատ շատ սերմ կգնայ—այսինքն  
4 վիթի փոխարէն կգնայ 10 փութ, 2) ցանւումէ  
անհաւասար, այդ պատճառով էլ արտում տեղ-տեղ  
բամբակի թփերը միմեանց խեղգում են և չեն զօ-  
րանում. տեղ-տեղ էլ ընդ հակառակն հողը մնումէ  
բոլորովին բաց, որտեղ զօրանում են չայիր և այլ  
բոյսեր (քաղ) և խեղգում բամբակին։ 3) սերմերը  
մասամբ շատ խորն են ընկնում և չկարողանալով  
դուրս ծլել փթումն հողում մասամբ էլ մնումն չծածկուած։ 4) Ամեն մի գործ—ինչպէս են սեհ-  
բակացնելը, քաղհանելը, չանաքը ևլն, բամբակի  
արտում այս դէպքում անհնար է կանոնաւոր  
կատարել։

Բ. Կարգով կամ շարքով ցանելը, ինչպէս  
վերեն ասացինք, լինելու է մեզնում չթով՝ մէկը  
մէջ ակօս թողնելով, որով կարգերը կլինեն մօտա-  
ւորապէս  $\frac{1}{2}$  արշին հեռաւորութեան վերայ մի-  
մանցից, կամ կարելի է շինել մի գործիք փայտից

նոյն ձեռվ, ինչ ձեռվ որ շինւում է մեր սովորական կոպիտ փոցիսը, միմիայն այն տարբերութեամբ, որ ատամները լինեն (նայելով երկրի կլիմային)  $\frac{1}{2}$ — $1$  արշին հեռաւորութեամբ. և այդ գործիքով լաւ մշակուած փորփոշ հողում կարելի է բանալ միանգամակուած 5—10 փոքրիկ ակօսներ ցանելու համար։ Այս ձեր ունի շատ առաւելութիւններ. օրինակ և

1) Ցանցում է հաւասար ամբողջ պիտը՝  
համարեա հաւասար խորոշեամբ

2) Ծանում է այնքան որքան չարգաւոր,  
—ամեն մի գեսետին հողում 2 փութ կամ խալ-  
փառում  $3\frac{1}{2} - 4\frac{1}{2}$  փութ:

3) Սեհրակացնելը, քաղհանելը, շահաքելը և  
առհասարակ ամեն մի գործ բամբակի արտուր  
կատարուի կանոնաւոր, արագ և արժան:

4) Կբուսնի հաւասարութեածի համար կամ համար կը հասնի և առատ պառող կտայ հաւասար—միաժամանակ, որովհետեւ բամբակի թփերը թէ հողից սնունդ կստանան առանց միմեանց խանգարելու և թէ արեւի տաքութիւնից և լոյսից կօգտուեն հաւասարապես, որը նոյնպէս անհրաժեշտ է ամեն մի բոլորի համար։

Գ. ձեւը ցանելու՝ ըստն-ըստն ցանելն է, որ ամեն ակատարեալ ձեւն է և զանազանություն է կարգով ցանելուց նորանովի, որ սերմելը չեն ձգում ակօցանելուց նորանովի—անընդհատ, այլ ցանում են 1—2 սում շարքով—անընդհատ, ամեն մի բնում  $\frac{1}{4}$ — $\frac{1}{2}$  տրշին հեռաւորում ամեն ամեն մի բնում  $\frac{1}{4}$ — $\frac{1}{2}$  տրշին հեռաւորում

թեան վերայ բունը բնից և ուղիղ մի գծի վերայ,  
որով սեհրակացնելը կլինի աւելի դիւրին և կա-  
նոնաւոր քան թ. գէպքում. նոյնպէս և իւր աճ-  
ման մէջ արեից և լոյսից օգտուելում են. այս  
ձեզ աւելի լաւ յարմարութիւններ ունի քան թ.  
(շարքով) ձեռվ ցանելը:

Կայ ցանքի մեքենայի որը դեռ մեղնում գրժ  
բաղդաբար մուտք չունի։ Մեքենան ցանում է  
բամբակը կարգով, բուհ-բուհ և մի և նոյն ժամա-  
նակ ծածկում է սերմերը հարկաւոր խորութեամբ։  
Այդ մեքենաներից յատկապես բամբակի համար  
գործ է դրւում Ամերիկայում ի միջի այլոց հար-  
րիս-ի մեքենան։

Այսպէս ուրեմն, թէ Ա. և թէ զ. ձեռվ ցանելուց վերջի վերջոյ բամբակի թփելը պիտի լինեն  $\frac{1}{4}$ — $\frac{1}{2}$  արշին հեռաւորութեան վերայ մեանցից (շարքում). իսկ ամեն մի շարքը միւսից պիտի լինի  $\frac{1}{2}$ —1 արշին հեռաւորութեան վերայ: Սերմերն էլ պիտի ցանուեն  $\frac{1}{2}$ —1 վերշոկ խորութեամբ: Շարքելը անպատճառ հարկաւոր է տանել ուղղութեամբ հիւսիսից հարաւ, որովհետեւ այս գեպքում արեգակը աւելի լաւ և հաւասար է ներգործում: բամբակն էլ շուտ կհասնի և կորզով ները հաւասար կրացուեն:

Թէ շարքերի հեռաւ որութիւնը միմեանցից  
և թէ շարքերում թփերի միմեանցից ունեցած  
հեռաւորութիւնը, ինչպէս և սերմերի ինչ խորու-

թեամբ ցանելը մասամբ կախումն ունի երկրի կի-  
մայից և հողի յատկութիւնից: Խոնաւ և անձ-  
րեային տեղերում նոյնպէս և կաւային ու մնջն-  
դարար հողում՝ պէտք է ցանել մեծ հեռաւորու-  
թեան վերայ, բայց քիչ խորութեամբ. իսկ ընդհա-  
կառակն չորային տեղերում և աւազային հողում  
պէտք է ցանել քիչ հեռաւորութեան վերայ, բայց  
աւելի խորը:

Բամբակը իւր կատարեալ հասակին հա-  
սած ժամանակը չպիտի լինի խեղդուած—խիտ,  
այլ ընդհակառակն ազատ և հաւասար լուսաւոր-  
ուած արեգակից. և պիտի ունենայ բաւականա-  
չափ տեղ իւր ճիւղերը պարզելու համար: Կանո-  
նաւոր աճած ճիւղերը գետանին զուգահեռական  
ընթացք պիտի ունենան, իսկ խտութիւնից նոքա  
բարձրանում են գեղի վեր և լաւ չեն աճում:

### Ճ Ր Ե Լ Բ.

Դեմի տեղերում բամբակը ցանելուց յետոյ  
անհրաժեշտ խոնաւութիւնը սպասում է հողից  
և անձրեներից. իսկ շատ տեղերում ինչպէս և  
մեր Երեանեան նահանգում ասացինք որ առանց  
ջրելու ոչ մի կուլտուրական բոյս չի աճիլ, ուրեմն  
և բամբակը ցանուելուց յետոյ անմիջապէս պէտք է  
ջրուի. հակառակ դէպքում հողի (արևի ազդե-  
ջրուի:

ցութիւնից և անձրեների պակասութիւնից) չո-  
րանալուց կարող է բամբակը չըուսնել կամ բուս-  
նել անհաւասար:

Ջրելու համար պէտք է կազմել մարգեր ջրի  
հոսանքի ուղղութեամբ: Մարգերը մարկոսով կազ-  
մելիս պէտք է աշխատել՝ որ ցանած կարգերը մար-  
գերի մէջ լինեն (հակառակ դէպքում կիսանգար-  
ուեն կարգերը).—օրինակ, եթէ կարգերը միմեան-  
ցից  $\frac{1}{2}$  արշին հեռաւորութիւն ունեն և հար-  
կաւոր են համարում մարգերը կազմել Յ արշին  
լայնութեամբ, այն ժամանակ ամեն մի մարգի մէջ  
կլինի Ղ կարգ բամբակ, որոնցից երկու կարգը կը  
գոյ թմբերի կողքին: Բայց աւելի լաւ է վարուել  
այսպէս.—Երբ հողը կանոնաւոր կերպով պատրաս-  
տած է նախ կազմել մարգեր և ջրել արար, որից  
յետոյ, երբ արար այնքան կցամաքի, որ կարելի  
կլինի վերան ման գալ ( $2-3$  օրից), չմով վերե-  
նկարագրածի պէս  $\frac{1}{2}-1$  արշին հեռաւորութեամբ  
ակօսներ բանալ թէ մարգերի մէջ և թէ թմբերի  
կողքին և ցանել դեռ համարեալ թաց հողի մէջ:

Այս դէպքը այն առաւելութիւնն ունի առաջ-  
նից, որ ջրելուց յետոյ հողը չմով կրկին քրքըր-  
ւում է, ուրեմն և ծլերի գուրս գալուն արգելք  
լինող կեղեը չկայ. իսկ ծլելուց յետոյ ըստ պա-  
հանջման կարելի է ջրել: Առաջին գեղքում, երբ  
ցանում է և յետոյ ջրուում գոյանում է արտի  
երեսին ամուր կեղեւ, որից ազատուելու համար

մեզնում տափանում են—ուրեմն աւելորդ չարչարանք և ծախս է լինում։ Աւելի լաւ է շմարկուսել այսինքն մարկոսով մարդեր չկազմել ջրելու համար, որովհետեւ ցանելուց յետոյ առաջին անգամ կարելի է ջրել չթով արած ակօսներով, իսկ ծլելուց յետոյ, բամբակի շարքերի միջով պէտք է մի ձի լծած անցկացնել վերեւ նկարագրած կուտակող գործիքը, որը վարելով և հողը երկու կողմի վերայ շուռ տալով թէ թփերի բգերը կլեցնի և թէ ջրելու համար յարմար առուներ կկազմի։

Թէ այսպէս և թէ այնպէս՝ սա առաջին ջուրն է, որի ժամանակը որոշում է ցանքը։ Իսկ դորանից յետոյ ջրելու վերաբերութեամբ շատ զգոյշ պէտք է լինել, որովհետեւ շատ անգամ բերքի աւելի քան կիսից զրկուելու պատճառն է անժամանակ և աւելորդ ջրելը։ այն ինչ դժբաղզաբար մեզնում առհասարակ ջրում են ամեն անգամ, երբ նկատում են որ և է անյաջողութիւն բամբակի արախ վերաբերմամբ, օրինակ, բամբակը իւր բուսականութեան առաջին շրջանում (այսինքն մայիս և յունիս ամիսներում) սովորաբար դանդաղ է աճում, ուստի և բամբակի աճման նպաստելու նպատակաւ՝ մեզնում շտապում են առատ առատ ջրել, առանց մտածելու, որ դա ևս առաւել կֆլասի։ որովհետեւ ջրելը աւելի ևս կպահացնի և կսառնացնի հողը, որով աւելի կդանդաղեցնի և կիսեղցացնի բամբակին իւր աճման

մէջ։ իսկ հողի խոնաւութիւնից և բամբակի խեղձութիւնից առաջ են գալիս բամբակի թփերի վերայ ոջիլներ, որոնք նոյնպէս արգելք են լինում բամբակի կանոնաւոր աճման։

Առհասարակ ջրելը ամրացնում և սառնացնում է հողը, պատճառ է դառնում աւելորդ խոտերի և չայիրի աճելուն, որոնց հետ բամբակը մաքառել չի կարող, ուրեմն պէտք կինի աւելորդ ծախս և աշխատանք արտք քաղից մաքրելու համար։ Ջրելուց հողի երեսի շերտը ամրանում է և խեղդում է բամբակի թփերին։ Երբեմն էլ նայելով արեկի տաքութեան աստիճանին և հողի յատկութեան, ժամանակից առաջ ջրելը պատճառ կը լինի բամբակի թփի փարթամ աճելուն։ Հոռանանալուն ի վեաս պաղարերութեան։

Որովհետեւ յաճախ ջրուող բօյսերը ունենում են քիչ և կարճ արմատներ, ուստի և ջրի սակաւ ժամանակ և ամառուան սաստիկ միջոցին նոքա, չկարողանալով հողի խորքում գտնուած խոնաւութիւնից օգտուել, տանջուում են, խեղձանում և ըսրաթափի լինում։ Ցածախ և անտեղի ջրելուց հողը թթուում է, առաջ է գալիս ամենին յայանի բամբակի ժանողը և ուրիշ սունգոյին հիւանդութիւններ, որոնց հասցրած մեծ վնասը զիտէ մեզանում ամեն մի երկրագործ։ Միւս կողմից, եթէ բամբակի ջուրը պահանջած ժամանակին չհասնի՝ այն ժամանակ բամբակը ուշ կհասնի,

կորզովները ուշ կբացուեն—ցրտերը վրայ կտան,  
ուրեմն կպակասի բերքի քանակութիւնը և ըս-  
տացուածն էլ կլինի յատկութեամբ վաս:

Պարզ է ուրեմն, որ մեզնում ջրելու ժամա-  
նակը հմտութեամբ որոշելը ամենակարեոր պայ-  
մաններից մինն է, ինչպէս ամեն մի բըսի համար,  
նյուպէս և մանաւանդ բամբակի համար: Այդ պատ-  
ճառով էլ նախ պէտք է լաւ ստուգել բամբակի  
ծարաւ լինելը և ապա՝ միմիայն անհրաժեշտ դէպ-  
քում ջրել: Պէտք է աշխատել, որքան հնարաւոր է  
ջրել արեկի կիզիչ ժամանակ, այլ երեկոյեան, դի-  
շերը կամ առաւտօտեան հովին: Չպէտք է խար-  
ուել բամբակի թփերի ձլորելուց արեկի սաստիկ  
կիզիչ ժամանակը, ինչպէս լինում է սովորաբար  
օրուայ ժամի 12-ից մինչև 3-ը, դա նշան չէ ծա-  
րաւութեան: Բայց երբ բամբակատէրը նկատում է  
օրուայ ժամի 9—10-ին, որ բամբակի թփերի  
ծայլերի տերեները թառամել, ձլորել և կախ են  
ընկել դալար ձիւղերի հետ միասին և մի և նոյն  
ժամանակ տերեները մութ կանաչ գոյն ունեն՝  
այդ նշան է, որ արտը ծարաւ է և պէտք է ջրել:  
Ցանելուց յետոյ երկրորդ անդամ պէտք է աշ-  
խատել որքան հնարաւոր է ուշ ջրել, որով ինչ-  
պէս ամեն բոյս, նոյնպէս էլ բամբակի թուփը ըս-  
տիպուած կլինի աճեցնել իւր արմատները դէպի  
հողի խորքերը. և այդ դեռ ևս նորա համար  
հողի խորքերը. և այդ դեռ ևս նորա համար  
դիմուար չի լինի, որովհետեւ արտը դեռ մի ան-

գամ միայն ջրուած լինելով շատ ամրացած չէ.  
բացի այդ՝ բամբակը ցանելուց յետոյ ըստ հնա-  
րաւութեան երկար անջուր մնալով կսովորի դիմանալ արեկի կիզիչ ազգեցութեան և ապագային:  
ամառուան սաստիկ ժամանակ իւր զօրեղ արմատ-  
ներով հողի խորքի խոնաւութիւնիցն էլ օգտուե-  
լով, յաճախ ջրուելու պահանջ չի զգայ:

Այսպիսով մեր ասածը ջրելու մասին հակա-  
ռակն է մեզնում յամառութեամբ բռնած ըն-  
թացքին—գարնանը ջրի առատ միջոցին գիւղա-  
ցին բոլոր ձիգը թափում է յաճախ և առատ  
ջրել արտերը, որով իւր ցանած բոյսերին դեռ  
տաքութեան մեջ ժամանակը սովորեցնում է  
քնքշութեան և արմատ չզօրացնելուն, այդ պատ-  
ճառով էլ տաքերի սաստիկ միջոցին խորում արմատ-  
ներ չունենալով և իրեւ քնքոյշ բոյսեր՝ ջրի պա-  
կասութիւնից չըրանում են: Այս է պատճառը, որ  
ամենին յայտնի մի քանի բոյսեր առանց ջրի բուս-  
նում և յաջող աճում են մեր դրերում:

Եթէ ցանելուց յետոյ բամբակատիրոջ յա-  
ջողուել է վերսոյգրեալի համեմատ տանել ջրելու  
գործը, այն ժամանակ բամբակի երկրորդ ջուրը  
կլինի մօտաւորապէս երկու ամսից յետոյ—յու-  
նիսի 15-ին. իսկ եթէ հողը կանոնաւոր կերպով  
պատրաստուած է և մոյիս-յունիսին անձրեներ  
եկել են՝ այն ժամանակ կարելի է ջրել աւելի ուշ  
—յուլիսի 10-ին: Երբ բամբակատիրոջ յաջողուի-

բամբակը երկրորդ անգամ ջրել այսպէս ուշ, այն  
ժամանակ նա կարող է երկրորդ ջրից յետոյ այլ ես  
չջրել ամենեին: իսկ եթէ բամբակատէրը երկրորդ  
ջուրը տայ մայիսին՝ նա ստիպուած կլինի երրորդ  
անգամ ջրել յունիսին կամ յուլիսին և շատ  
կարելի է որ այսպիսով ստիպուած լինի և չոր-  
րորդ անգամ ջրել: Այսպիսի դէպքերում խոր-  
հուրդ ենք տալիս, որ չորրորդ անգամուայ ջուրը  
լինի վերջինը, որը չպիտի լինի աւելի ուշ քան  
օդոստոսի 10-ը:

Վերջին ջուրը մեծ նշանակութիւն ունի—եթէ  
վերջին ջուրը ժամանակից առաջ լինի՝ ծաղիկները  
և մանր լուլէքը կթափեն. իսկ եթէ վերջին ջուրը  
ուշանայ՝ այն ժամանակ ծաղիկները և լուլէքը  
դարձեալ կթափեն ծարաւութիւնից, այն ինչ՝ եթէ  
այդ ջուրը լինի իւր պահանջած ժամանակին,  
կստացուի առատ և լաւ յատկութեամբ բերք:  
Վերջացնելով ջրելու մասին մեր ասելիքը, ան-  
հրաժեշտ ենք համարում շեշտել, որ թէ և մեզ-  
նում առանց ջրելու հողից բերք ստանալու հնա-  
րաւորութիւն չկայ, բայց և այսպէս ջրելը օգուտ է  
միմիայն այն ժամանակ երբ անհրաժեշտ է, հա-  
կառակ դէպքում միշտ մնա է:

ԲԱՄԲԱԿԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԲՈՒՍՆԵԼՈՒՑ ՅԵՏՈՅ.

Բուսնելուց յետոյ բամբակի պահպանու-  
թիւնը և կանոնաւոր աձելը կախումն ունի հե-  
տեւեալ գործողութիւնների կատարելուց. 1) ջրել,  
որի մասին գրուեց. 2) քաղցանել և հողի երեսը  
փորփոշացնել. 3) սեհրակացնել կամ նօսրացնել.  
4) բամբակի թփերի ծայրերի կտրելը:

Ցանելուց առաջ կամ յետոյ, ինչպէս աս-  
ուած է, արտը ջրում է, որից յետոյ բամբակը  
կծլի 6—14 օրուայ ընթացքում—եթէ ցանուած է  
փորփոշ հողում և տիրում է տաք եղանակ՝ բամ-  
բակը կծլի հաւասարապէս և կատարեալ 5—7  
օրուայ ընթացքում. իսկ եթէ ցանուած է կա-  
ւային պինդ հողում և եղանակները գեռ սառն են՝  
այն ժամանակ կծլի համեմատաբար ուշ և անհա-  
ւասար: Ցանուելուց և ջրուելուց յետոյ առհա-  
մարակ գոյանում է հողի երեսին ամուր կեղեւ,  
որի տակից բամբակի ծլերը չեն կարող գուրս գալ:  
ուստի և կեղեից աղատուելու համար պէտք է  
երկաթեայ փոցիսով տափանել, որը կեղեւ ոչնչաց-  
նելուց զատ՝ հողն էլ փորփոշացնելով ազատ մուտք  
կտայ օղին գէպի արմատները. այս անհրաժեշտ  
բոյսի թէ շնչելու և թէ կերակրուելու համար:  
կամ եթէ երկաթեայ փոցիս չկայ, այն ժամանակ  
պէտք է տափանել մեր սովորական տափանով

(ВОЛОКУША), ինչպէս որ կատարւում է մեզնում  
ամեն տեղ. բայց պէտք է նկատել, որ տափանը  
թէե կեղեից ազատում է, բայց սղմում է, ամ-  
բացնում է հողը, որը մանաւանդ բամբակի հա-  
մար ցանկալի չէ:

Բամբակի ծլերը յաջող գէպքում 3—5  
օրում կհասնեն 1—2 վերշոկ բարձրութեան և  
երկու սերմային տերեւների միջից կերպորդ  
տերեւը, որից յետոյ բամբակի արտը կստանայ  
կանաչ գոյն: Յանքից սկսած մինչև կորզովների  
կանաչ (պտուղների) հասնելը տեսում է մօտաւորապէս  
(պտուղների) հասնելը տեսում է մօտաւորապէս  
ամիս (օգոստոս): Տաք և չորային ամառը ցան-  
դից մինչև ծաղկելու և ծաղկելուց մինչև առա-  
քից կորզովների բացուելու ժամանակամիջոցը փոքր  
ջին կորզովների բացուելու ժամանակամիջոցը փոքր  
ինչ կարճանում է: Սովորաբար 70—80-րդ օրե-  
ինչ կարճանում է ծաղկել, որից 40 օր յետոյ հաս-  
րում սկսում է ծաղկել, որից 40 օր յետոյ հաս-  
նում են պտուղները. բայց հասնելը և մի և նոյն  
ժամանակ ծաղկելը շարունակում է մինչև աշ-  
խամանակ ծաղկելը շարունակում է մինչև աշ-  
խամանակին առաջին ցրտերը—այսինքն երբ մի և նոյն  
թփի վերայ բամբակի լուլէքի մի մասը հասնում է:  
թփի վերայ բամբակի լուլէքի մի մասը հասնում է:  
մասը գեռ կանաչ է, իսկ ծաղկիներն էլ երե-  
ւում են անընդհատ: Ուրեմն որքան հնարաւոր է  
եղել շուտ անել բամբակի ցանքը և որքան ուշ են  
սկսուել աշնանային ցրտերը, այնքան շատ կլինի  
ամեն մի թփից ստացուած հասած կորզովների  
քանակութիւնը:  
ծլերուց մօտաւորապէս 10—15 օր յետոյ

սովորաբար պէտք է լինում արտը քաղհանել աւե-  
լորդ խոտերից և սեհրակացնել, այսինքն բամբակի  
շարքերի մէջ պէտք է ընարել և դուրս քաշել  
նուազ և խեղճ թփերը և թողնել աւելի փար-  
թամ աճածները, ինչպէս ասուած է,  $\frac{1}{4}$ — $\frac{1}{2}$  ար-  
շին հեռաւորութեան վերայ թուփը թփից: Դո-  
րանից յետոյ բամբակի թփերը գտնուելով միմեան-  
ցից ազատ տարածութեան մէջ՝ կածեն ազատ և  
առողջ տարածելով իւրեանց արմատները զեռ ևս  
փորփոշ հողի խորքերը, որով ապագային ընդու-  
նակ կլինին արեին, չորութեան և զանազան հի-  
ւանդութիւններին դիմադրելու: Ընդ հակառակին  
եթէ սկզբից չահրակացնենք, բամբակի մօտաւոր  
թփերը միմեանց գէմ կոսուելով կխեղճանան, կա-  
նոնաւոր չեն ամի: Քաղհանել պէտք է ամենին  
յայտնի թագուցակներով, որոնք հարկաւոր է որ  
շինուեն աւելի լայն բերանով, քան մեզնում ըն-  
դունուած է և երկայն կոթով, որ կարելի լինի  
կանգնած քաղհանել: Քաղհանելուց՝ բացի չայի-  
րից և այլ աւելորդ խոտերից արտն ազատելը,  
պէտք է աշխատել ամրողջ արտի երեսը քրքրել,  
փորփոշացները որով հողի միջի խոնաւութիւնը  
կպահպանուի արեի անմիջական աղդեցութիւնից  
և գոլորշիանալուց, որովհետեւ երեսի փորփոշ հողը  
մազային խորովակներից զուրկ լինելով՝ ընդունակ  
չէ ներքեւ գտնուած խոնաւութիւնը ընդունելու  
և դուրս տալու: Բացի այդ, հողի երեսը փորփո-

շացնելով մենք աւելի և աւելի հնարաւորութիւն ենք  
տալիս օդին հողի խորը ներգործելու, որով, ինչ-  
պէս բացատրուած է, հողը կպարարտանայ իսկ  
բամբակի արմատները լաւ անունդ ստանալով հան-  
գերձ, ազատ շնչելու հնարաւորութիւն կունենան:

Այս պատճառով ահա հարկաւոր է որ քաղ-  
հանը լինի ոչ թէ ջրելուց առաջ ինչպէս մեզ-  
նում ընդունուած է, այլ անպատճառ ջրելուց  
յետոյ: Եթէ նախ քաղհանում են և ապա ջրում  
այն ժամանակ աւելորդ խոտերը նորից աճում են  
(քաղը կոխում է), իսկ հողի երեսը ամրանալով  
գոլորշիացնում է իւր մէջ գոյացած մազային խո-  
ղովաներով բոլոր ներքեւի խոնաւութիւնը, որից  
յետոյ հողը արեկի կիզիչ ճառագայթներից սկը-  
սում է ճաքճաքել, որով բացւում են բամբակի  
խորքի արմատները. ընդ հակառակն ջրելուց յե-  
տոյ քաղհանելով արտը ազատում է քաղից,  
ճաքճռուելուց և պահպանում է խոնաւութիւնը,  
որով ազատում է նա աւելորդ անգամ ջրուե-  
լուց: Պարզ է որ քաղհանելը չպիտի լինի միմիայն  
արտը քաղից ազատելու համար, այլ շատ ան-  
գամ ջրելուց յետոյ: Երբ արտի երեսը սարակո-  
տում է, վերև յիշած նպատակով՝ հարկաւոր է  
ամբողջ արտի երեսը հաւասարապէս փորփոշաց-  
նել թագուշակներով, չնայելով որ արտը լինի բո-  
լորովին մաքուր աւելորդ խոտերից (քաղից):  
Քաղհանելուց պէտք է բամբակի թփերի չորս

բոլորը լեցնել հողով (բուզը լեցնել): Այս նպա-  
տակով ուրիշ երկրներում գործ է զրւում վերև  
յիշուած երկթեանի կուտակող գործիքը, որը մեծ  
յարմարութիւն ունի. իսկ մեզնում կարելի է  
կուտակել լայն բերտն թագուշակներով:

Թէ քաղհանելը և թէ մանաւանդ նօսրաց-  
նելը պէտք է կատարուի անպատճառ արտի նամ-  
ժամանակ. հակառակ դէպքում մնացող բամբակի  
թփերի արմատները կվնասուեն: Այս բոլոր գոր-  
ծողութիւնները պէտք է կատարուեն ճշգութեամբ:  
Թող համոզուած լինի ամեն մի երկրագործ, որ  
եթէ արտի երեսը փորփոշ և մաքուր չպահի աւե-  
լորդ խոտերից (քաղից): Նա առատ բերք երբէք  
չի ստանայ. այդ պատճառով էլ բամբակի արտը  
գեռ վարելուց սկսած պիտի աշխատի մաքուր պա-  
հել խոտերից կրկին և կրկին վարելով ցելը. իսկ  
քաղհանելու ժամանակ աշխատի լաւ մաքրել միշտ  
անգամ ձեռքով դուրս քաշելով խոտերը իւրեանց  
արմատներով: Մեզնում ընդունուած է (երեխ  
ստիպուած) բամբակը քաղհանել Յ անգամ: Եթէ  
այդ երեք անգամն էլ քաղհանելու ի բացի  
ջրելուց յետոյ, և քաղհանելուց աշխատուի բացի  
քաղից մաքրելը, հաւասարապէս հողի երեսը  
կանոնաւոր փորփոշացնել՝ այն ժամանակ գուցէ  
այլ ևս պէտք չլինի, կամ ոչ աւելի քան մի ան-  
գամ ևս շոգ ժամանակ ջրելուց յետոյ գուցէ  
հարկ լինի հողի երեսը փորփոշացնել հողը ճաք-

ճաքուելուց ազատելու համար: Եթէ քաղհանի չետ միացնուեր և վերև յիշած երկթեանի կուտակող (օկչինիկ) գործիքը՝ այն ժամանակ քաղհանը և հողի փորփոշացնելը կկրծատուեր թէ արժողութեամբ և թէ գործ դրած ժամանակի քանակութեամբ: Այդ պատճառով անհրաժեշտ է ամեն մի երկրագործի համար ունենալ մի հատայդ գործիքից:

Բամբակի ծաղկելուց առաջ—մօտաւորապէս ցանելուց 70—80 օր յետոյ, որը կլինի յուլիսի սկզբներին՝ հարկաւոր է բամբակի թփերի վերին ծայրերը (գագաթները) կտրել-կմ՛ջթել  $\frac{1}{2}$ —1 վերշոկ երկայնութեամբ: որով ծառի մեծանալու (բօյ քշելու) համար գնալիք աննղարար նիւթերը կը դորձագրուեն ծաղիկների և պտուղների վերայ նոյնպէս էլ կմջթել պէտք է և ձիւ զերի ծայրերը, որոնց վերայ են գլխաւորապէս պտուղները, որոնք այս գէպքում աւելի սնունդ կստանան ծառից լաւ կզօրանան և կանոնաւոր կբացուեն: Բայց այս ծայրերի կմջթելը անհրաժեշտ է այն ժամանակ, երբ բամբակը ցանուած է սեհրակ և մի և նոյն ժամանակ պարարտ ուժեղ հողում ու բեմն և ածում է փարթամ—հոռանում է:

Այս գործողութիւնից յետոյ բամբակի արար պէտք է թողնել հանդիսաւ դրութեամ մէջ մինչեւ չանաքելը, որովհետեւ դրանից յետոյ բամբակը սկսում է ծաղկել և պտուղներ կազմել: իսկ այդ

միջոցին բանուորներից թեթև շարժումն անգամ պատճառ կլինի ծաղիկների և մատաղ պտուղների թօթափելուն:

Բամբակի ծաղիկները ապրում են մօտաւորապէս մի օր, առաւեօտեան նոքա սպիտակ դեղնախառն գոյն ունեն, կեսօրին կաթնագոյն են և բոլորովին բացուած են, երեկոյեան բաց վարդագոյն են և բոլորովին կծկում են, երրորդ օրը ծառից վար են թափւում: Մեր գիւղացոց ասելով ծարաւացած բամբակը վարդագոյն ծաղիկ կտայ:

ԲԱՄԲԱԿԻ ՑԱԽԵՐԸ ԵՒ ԹՁՆԱՄԻՆԵՐԸ.

Երբ սկսում են առաջին կորզովները հասնել այսինքն օգոստոսի սկզբներից երեսում են բամբակի վերայ ցաւեր—որոնք են. ժանզ (rust) և սեւ (cercospora gossypina): Այս երկուն էլ մեզնում յայտնի են չոս անուամբ—չոսը տալ:

Ժանզը տալու սկզբնական նշաններն են: նախ տերեների կարմրելը, որից յետոյ անցնում է բնափայտերի և պտուղների վերայ: Տերեները հետզհետէ ստանում են ժանզի գոյն, այդ պատճառով էլ կոչում է ժանզ: իւր համար յաջող հանգամաներնուում ժանզը շատ արագ տարածում է ամբողջ արտի վերայ և բամբակի թփերը

կարճ միջոցում զրկում են իւրեանց տերեներից  
և դալար ծայլերից, որից յետոյ մնում են ցցուած  
սեացած տկրոր թփերը:

Ժանգ ցաւը ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ խոշորա-  
ցոյցով տեսանելի մի սունդ, որը այս գեպքում  
ապրում է ի հաշիւ բամբակի ծառի: Երբ բամ-  
բակի թփերը ուժեղ չեն—ճողած են և չեն աճում  
որը կարող է յառաջ գալ զիխաւորապէս սնունդ  
չափանակուց կամ ստացած սննդի վնասակարու-  
չամբինից, այն ժամանակ թփերը ընդունակ են են-  
թարկուելու ցաւերի, և վարակում են ի միջի  
այլոց ժանգով, որը ամենավտանգաւորն է բամբակի  
համար: Ուրեմն, որպէս զի բամբակը չըռնուի ժան-  
գով՝ ամենազլխաւոր և առաջնի պայմանն է նորա-  
լաւ սնունդ ստանալը և աճելը. իսկ զորա հա-  
մար հարկաւոր է մշակել բամբակի արար թէ մինչեւ  
ցանելը և թէ ցանելուց յետոյ այնպէս՝ ինչպէս  
որ մինչեւ հիմոյ նկարագրուած է:

Երկրորդ—հողի մէջ չպիտի լինեն վնասակար  
նիւթեր, որոնք գոյանում են հողի մէջ զիխաւո-  
րապէս հողի թթուելուց իսկ հողը կթթուի չա-  
փազանց ջրելուց—անձրեները մեղնում դժուար  
թէ պատճառ լինեն հողի և օղի չափազանց խո-  
նաւութեան: Արտի չափազանց և անժամանակ  
ջրուելուց առաջ է գալիս թէ հողի թթուութիւնը  
և թէ խոնաւ և տօթ օդ արտի երեսին, որը  
չափաստում է ժանգիսունգերի զարգանա-  
շատ նպաստում է ժանգիսունգերի զարգանա-

լուն: Ժանգը չոր արտում կարմիտգոյն է, իսկ  
խոնաւ արտում սև կամ մութ գարշնագոյն է  
գառնում: Ուրեմն չարաչար սխալւում են նոքա,  
որոնք ժանգից ազատելու նպատակով՝ շուտ շուտ  
ջրում են բամբակի արտերը, յամառութեամբ  
չլոելով ասողներին, թէ ջրելը ժանգով բռնուած  
արտին աւելի կվասաի:

Բամբակատէրը արտերը ջրելուց աչքի առաջ  
պիտի ունենայ և տարուայ եղանակները— եթէ  
տարին սովորականից աւելի անձրեային է, պէտք է  
սովորականից աւելի քիչ ջրի:

Ժանգը վնասում է ամեն տեսակ բամբակին  
միմիայն այն տարբերութեամբ, որ օրինակ Ամե-  
րիկական տեսակների տերեները սկզբում կար-  
միում են ժանգից: Իսկ զարտղօզայի տերեները  
դեղնում են, մնացածում՝ հետեանքը մի և նոյն է  
երկուսի համար ևս:

Մի երրորդ միջոցն էլ ժանգից (նոյնպէս և  
ամեն ցաւերից և թշնամիներից) ազատելու հա-  
մար այն է, որ բամբակը ամեն տարի մի և նոյն  
տեղում չպէտք է ցանել, այլ ինչպէս ասուած է,  
պէտք է ունենալ կանոնաւոր ցանքաշրջան։ բացի  
այդ գիւղացիք պիտի աշխատեն, որ բամբակների  
արտերը միմեանց մօտ չլինեն, հակառակ գեպ-  
քում երբ մինի արտը որ և է պատճուից ժան-  
գով բռնուի կվարակի և կողքում դանուած բամ-  
բակի արտերին, որովհետեւ այդ սունգերի թողը

(սալմը) դիւրութեամբ քամին և միջատները կը տանեն մէկից միւսի արտը:

Բամբակի միւս ցաւը—սեւը, երեւում է բամբակի տերեւների վերի երեսում (շիտակ երեսում), մուժ գարչնազոյն կամ սև բծերով։ Սորա տուած վնասը համեմատ ժանգին մեծ չէ։ Սա ևս խոշորացոյցով տեսանելի ձրիակեր սունգ է, բայց սորա առաջ գալու պատճառները գեռ ևս ուսումնասիրուած չեն։

Վերջին ժամանակներս յայտնուեց ևս մինոր ցաւ բամբակի համար, որը նոյնպէս խոշորացոյցով տեսանելի սունգ է և կոչում է անլրակնօզա (anthraenose)։ Սա վնասում է գլխաւորապէս լուլերին, չժողնելով նոյց կանոնաւոր աճել և այդ պատճառով էլ կորզովերը գեռ չհասած բացւում են և ենթարկուելով անձրեներին և թողերին՝ փշանում են։ Բացի այդ՝ ստացուած բամբակի մազիկները լինում են կարծ և յատկութեամբ վատ։ Սորա մասին ևս —թէ ի՞նչ պատճառներից է առաջ գալիս և ի՞նչ միջոցներ պէտք է ձեռք առնել գորա գէմ՝ լաւ ուսումնասիրուած չէ։ Բատ իս վերջին երկու տեսակները ծովային և խոնաւ երկրների բնակիչներ են, ուստի և նոքա մեր չորային երկրում և մեր կիզիչ արեկի տակ, եթէ առաջ էլ գան, այնու ամենայնիւ չեն կարող զարգանալ և մեծ վնասներ էլ չեն պատճառիլ։ Ինչ էլ կվերաբերի ժանգին՝ նորանից ևս (կրինում ենք) գժուար

չի լինի ազատուել, եթէ բամբակի համար հողը լաւ մշակուի և սննդարար լինի, ժամանակին և չափաւոր ջրուի, բամբակը կանոնաւոր և մաքուր պահուի խոտերից և ամեն տարի մի և նոյն տեղում չցանուի։

Բամբակի թշնամիներն են ի միջի այլոց չետեւեալ միջատները։

1 Ոջիլ (Louse), 2 ցեց (Moth) և 3 կոկոնի որդ (Bolle worm)։

1) Ոջիլները երեւում են տերեւների վերայ, երբ երկար ժամանակ խոնաւութիւն է տեսում։ Բայց յետոյ եթէ սկսի չորային եղանակ և արտը չջրուի, այն ժամանակ նոքա 3—4 օրից յետոյ կոչնչանան առանց բոյսերին վնասելու։

2) Ցեց. — սա մի յայտնի թիթեռի (Noctua Zilina) թրթուռն է, սոքա երեւում են մեծ քանակութեամբ և համարւում են վնասակար։ Սոցա ոչնչացնելու համար պէտք է սրսկել բամբակի թշփերը թութունաջրով կամ ուրիշ թունաւոր չեղուկով։

3) Կոկոնի որդերը կշտ գոյսութիւն ունեն. Չորային ժամանակ քիչ խակ խոնաւ ժամանակ մեծ քանակութեամբ։ Սոքա մեծ վնաս են հասցնում բամբակի կոկոններին։ Կէսօրից յետոյ բամբակի արտերում կարելի է տեսնել թուխ կարմիր զոյնով թիթեռներ, որոնք շրջում են ծաղիկների շուրջը։ Նոքա զնում են իրենց ձուերը կոկոնների ներքին

մասում և հէնց որ որդը ձուից դուրս է գալիս՝ ծակում է մատաղ կոկոնը և տեղաւորւում է նորա մէջ:

Այս թիթեռի մասին կարծւում է, որ իւր ձուերը զնում է նաև սիմինդրի (Եգիպտացորենի) գլխների մէջ, այդ պատճառով էլ բամբակի արտում մի քանի կարգ սիմինդր են ցանում, որ բամբակի թիթեռը թիթեռից ազատուեն:

### ԲԱՄԲԱԿԻ ՀԱՒՔԵԼԻ

(ՉՆԵԱՔ).

Վանոնաւոր աճած և հասակն առած բամբակի թուփը ուրիշ երկրներում հասնում է մինչեւ 2 արշին բարձրութեան, ունենալով 10—20 հատ լաւ զարգացած և պառաջներով լի ձիւղեր: Խոկ հասած կորզովների քանակութիւնը հասնում է 170—180-ի: Մեզնում թիթի մեծութիւնը պիտի լինի մօտաւորապէս զննեա մի արշին բարձրութեամբ, 10—12 հատ ձիւղերով և 50—60 հատ կորզովներով: Վանոնաւոր մշտկուած հողում կանոնաւոր պահպանուած բամբակի ամեն մի խալվար աեղից կատացուի 150—200 փութ հնդաւոր բամբակ:

Զանաըլ առհասարակ լինում է երեք երես: Առաջին երեսը սկսում է մօտաւորապէս սեպ-

տեմբերի 15-ից յետոյ: Թէպէտ և բամբակի ցածի ձիւղերի կորզովները սկսում են հասնել և բացուել մօտաւորապէս օգոստոսի 15-ից, բայց սկզբում այնքան քիչ են լինում բացուածները, նոցա համար չարժի չանաքաւոր տանել ալտը. իսկ սեպտեմբերի 15-ին բացուած կինեն ներքին մասի գլիթէ բոլոր կորզովները, ուստի և այդ ժամանակ պէտք է հաւաքել:

Բացուած կորզովները չպէտք է երկար թողնել թփերի վերայ, որովհետեւ թէ քամին կանի և թէ նոքա հետզհետէ ենթարկուելով թողի, խոշնաւութեան և տաքութեան-կարող են փտել կամ առ նուազն մութ գոյն ստանալ, որով բամբակի արժեքը կցածանայ. իսկ որոնք մնան կորզովների մէջ մաքուր և անվնաս՝ նոքա և ս փոփոխակի ենթարկուելով նամութեան և արեի ճառագայթներին՝ կստանան կոպտութիւնն և չափազանց սպիտակութիւն, որը լաւ չի գնահատւում: Այդ պատճառով էլ մեզնում աւելի վատ բամբակներ ստացւում են աղալլ գիւղերում: որտեղ գիւղացիք սահպուած են բացուած բամբակը շաբաթներով թողնել գաշտում: Հաւաքած չոր բամբակը սեպտեմբերի գեռ տաք ժամանակը՝ հարկաւոր է կիտել շուաք տեղում և ոչ արեի տակ, որպէս զի չկոշտանայ:

Զպէտք է հաւաքել նոյնպէս խակ և խոնաւ բամբակը օրինակ—անձրեներից յետոյ կամ առա-

«օտեանը շաղ ժամանակ», այլ պէտք է հաւաքել հասածները և չոր ժամանակ։ Հակառակ դէպքում չանաքաւորները խոնաւ բամբակը կճմին — կվատացնեն, և բացի այդ խոնաւ կիտուած բամբակը կտաքանայ ու կփաթի կամ առ նուազն կստանայ թուիս կարմիր գոյն — ինչպէս լինում է շատ անգամ լիից ստացած բամբակը։ Չանաքաւորները պիտի ունենան իրենց հետ անպատճառ քաղաւակներ, որոնց մէջ պիտի ձգեն կորզովներից մատներով զգուշութեամբ դուրս քաշած բամբակը։ Չպէտք է գործածել այդ նպատակի համար զոգնոցներ, որոնցով չանաքաւորները ձմյում և արուում են բամբակը։ Հաւաքած բամբակը տուն պէտք է կրել մեծ մեծ քթոցներով սայլի վերաց գրուած։ Առհասարակ բամբակի հետ պէտք է վարուել մեծ քնքշութեամբ, այն ինչ մեզնում ամենանուրբ բամբակն անդգոյշ և կոպիտ վերաբերուելուց դառնում է տրորած ըրդի կամ քեշի (թաղիքի) նման։ Չանաքելուց պէտք է հրակել բանուորների վերայ, որ մաքուր հաւաքեն — առանց հողի, տերեների և չոփերի։ Հակառակ դէպքում ստացած բամբակը մեքենայից դուրս է գալիս զիրիլոտ (անմաքուր)։

Հարազօղայ կոչուած բամբակի կորզովները լու չեն բացւում, այդ պատճառով էլ մասներով դուրս քաշել բամբակի ծիւերը դժուար է։ ուստի և ստիպուած են կորզովները ամբողջութեամբ

պոկել բամբակի թժիկերի վրայից, բերել տուն և յետոյ ձեղքելով կորզովի փեղկերը ազատել բամբակը նորանից։ Հասկանալի բան է, որ այդպիսով կսացուի անմաքուր բամբակ։ Նորան զիրիլից մաքրելու համար գործ է դրում մեզնում «չոշո» կամ խժավժի կոչուած մի գործի։ Սա ձլուռի շուերից երկայն տակառի ձեռվ գործուած քթոց է։ Դորա միջից անցրած է մի փայտեայ սռնի, որի ծայրերը յենւում են հաջայ փայտերի վերսց։ Այդ ջոշոի մէջ լցնում են (մաս, մաս) զարազօղայի կորզովները և սկսում են ուժեղ կերպով պտեցնել — այդպիսով վիրելը և այլ ուրիշ ախտերը քըթոցի գործուածքի արանքներից թափւում են ցած, մնում են մէջը մաքրուած կորզովները։ Դորանից յետոյ կորզովները յանձնուում են կանանց ձմեռուայ ընթացքում բամբակը դուրս քաշելու։

Չանաքի առաջին երեսը, ինչպէս տսացինք, պէտք է սկսել երբ ցածի ձիւղերի կորզովները բոլորովին կբացուեն — մօտաւորապէս սեպաւմբերի 15-ին։ Առաջին երեսի բամբակը չպէտք է խառնել միւսների հետ և նորանից սերմ չպէտք է վերցնել ցանելու համար, որովհետեւ առաջին երեսից ստացած բամբակը չամեմատաբար թէպէտ և լաւն է, բայց մասամբ բաղկանում է կանոնաւոր չհասած բորզովներից, որոնք օդոստոսի և սեպաւմբերի սկզբների զօրեղ արեկից ստիպուած գեռ չհասած բացւում են և դոցանից ստացուած բամբակն էլ

սերմն էլ լինում է յատկութեամբ վատ։ Մեղնում թէ յատկութեամբ վատ և թէ քիչ բամբակ ըստանալու զիմաւոր պատճառներից մինը հենց այն է, որ ընտրովի սերմ չի ցանւում, այլ ցանւում է առհասարակ բոլոր երեսների խառնուրդից ստացուած սերմ, կամ թէ սերմացուն վերցգից ստացուած սերմ, կամ հեռմացուն վերցգից ստացուած են այս առաջին երեսի բամբակից, որը սխալ է։

Երկրորդ երեսը սկսում է առաջին երեսից մօտաւորապէս 20—25 օր յետոյ։ Երկրորդ երեսի բամբակն է ամենազովելին, որովհետեւ այդ երեսի կորզովները լինում են կանոնաւոր զարգացած և խոշոր, ուրեմն և առատ բերք տուող, բամբակի ժաղիկներն էլ լինում են աւելի երկայն և քնքոյց։ Այս երեսից ստացած բամբակը պէտք է ջոկիլ և առանձին մաքրել հնտահան մեքենայով, որից ըստացած սերմերը միմիայն գործածել ցանելու համար։ Անհրաժեշտ է մեծ ուշ դարձնել սերմի ընտրութեան վերայ, որովհետեւ թէ բամբակի լաւութիւնը թէ առատ բերք ստանալը և թէ տարեց առաջ շուտ հասնելը զիմաւորապէս կախումն ունի տարի շուտ հասնելը պատճառով էլ լաւ կը սերմի լաւութիւնից։ Այդ պատճառով էլ լաւ կը լինէր մինչև անգամ, որ սերմի համար հաւաքւէր արտի մէջ աշքի ընկնող առողջ, փարթամբ առած, խոշոր և շատ կորզով տուող թփերից, իսկ կորզովներն էլ ընտրել խոշորները և լաւ հասած սերմ։ Սերմի համար ընտառած հնտաւոր բամբակը,

ինչպէս և առհասարակ ամեն լաւ բամբակ, պիտի լինի այնքան քնքոյց և փարթամ, որ ձեռք առած միջոցին կարելի չլինի նկատել (աչքով) նորա մէջ եղած սերմերը. իսկ հեռութից կարելի չլինի նորան զանազանել մաքրած (անսերմ) բամբակից։

Այսպէս ընտրովի սերմ ցանելով և կանոնաւոր մշակելով՝ կարելի է մի քանի տարուց յետոյ ստանալ մի և նոյն հոգից թէ քանակութեամբ և թէ յատկութեամբ մի քանի անգամ լաւ և մի քանի անգամ շատ բամբակ։ Բացի այդ՝ այդպիսի սերմերից բուսած բամբակի թուփը ոչ միայն հիւանդութեամբ վարակուած չի լինի, այլ և ընդունակ կլինի չենթարկուել ցաւերի ազդեցութեան։

Եւ այսպիսով մենք հետզետէ կունենանք մեր երկրում ձեռք բերած, մեր երկրի կլիմային, հողին և այլ տեղական հանգամանքներին սովորած, թէ յատկութեամբ և թէ քանակութեամբ լաւ բերք տուող սերմեր. ուրեմն ստիպուած չենք լինի Ամերիկայից կամ ուրիշ երկրից նոր սերմ բերել տալու, որը մեր երկրի հանգամանքներին սովոր չլինելով՝ չէ զօրանում և չէ տալիս այնպիսի բերք, ինչպէս իւր տեղում։

Երրորդ կամ վերջին երեսը ամենավատն է և պէտք է չխառնել ոչ մի երեսի հետ, որովհետեւ այդ ժամանակուայ կորզովների մեծ մասը բացուած են լինում ցրտից—դեռ չհասած։ Վերջին երեսը (հոկտեմբ. վերջերին կամ նոյեմբ. սկզբ.)

միշտ ենթարկւում է պարզկաների, որից թէ բամբակի թուփը և թէ պտուղները մեռնում են. և այս իսկ պատճառով հասնելու մօտացած պտուղները ցրտից բացւում են. իսկ աւելի խակերը—լուլը հաւաքւում է առանց բացուելու և փըռում է արեւի տակ բացուելու համար։ Պարզ է, որ այսպիսով ստացուած բամբակը թէ նրբութեամբ և թէ գոյնով ամենավատը կլինի և դըքբաղաբար մեզնում այդ ևս խառնւում է միւս երեսներից ստացած բամբակների հետ, որով թէ բամբակը յատկութեամբ և արժէքով ստորանում է և թէ սերմերը կիսով չափ վատն են ստացւում։ Այսպիսի սերմերից ստացած բամբակի թուփն կլինի թոյլ՝ ցաւոտ, անբերք և կտայ անշուշտ վատ յատկութեամբ բամբակ։

Հաւաքած բամբակի տեսակները պէտք է տեղաւորել առանձին առանձին մի չոր և քամի խաղացող շինութեան մէջ, և թողնել այնտեղ մնայ 5—6 շաբաթ. որի ընթացքում բամբակի մազիկները սերմերից իւղ ընդունելով՝ ստանում են թեթև դեղին գոյն—«ղեղին շուաք», որը գործարանատէրերից լաւ է գնահատւում։

### ԲԱՄԲԱԿԻ ՀՆՏԱՀԱՆ ԱՆԵԼԸ (ԲԵՄԲԱԿ ՔԵՑԵԼԸ).

Բամբակը դաշտից առն բերելուց և մի քանի շաբաթ չոր շինութեան մէջ պահելուց յետոյն

պէտք է մաքրել սերմից—ի հարկէ երբ նա բոլորովին չոր է. եթէ բամբակը փոքր ինչ խոնաւ լինի՝ մաքրող մեքենան բամբակի մազիկները կծամծմի, կտորուկտոր կանի և դուրս կրերի փրթիկ-փրթիկ, արորուած և ոչ քնքոյշ ու միատեսակ որպիսին ստացւում է չոր բամբակից։

Հնտաւոր բամբակը պիտի լինի չոփերից, տերեներից և այլ աղտոտութիւնից աղատ, հակառակ դէպքում մեքենան մանրացնելով այդ բուլորը ևս առաւել կիսառնի բամբակի հետ և դուրս կրերի անմաքուր (զիրիլոտ) բամբակ։

Բամբակը հնտահան անելու համար՝ հիմայ տարածուած են Ամերիկական Ճին կոչուած մեքենաները, որոնք բազմատեսակ են, բայց բոլորն էլ մօտաւորապէս մի և նոյն կազմութիւնն ունեն զլան բոլորածե սղոցներով կուրծք (զափաղ) իւրկողերով, որոց միջով շրջում են սղոցները և խոկողերով, որոց միջով շրջում են սղոցները և խոկողանակ (փուզայ), որը աղատում է բամբակի ծիւերը սղոցներից և մեքենայից գուրս ձգում։

Այդ մեքենաներից յայտնի է Գոլլէտի Ճինը (Gollett), որի սղոցները անում են սովորաբար 300—400 պտոյտ, իսկ խոզանակները 1200—1600 պտոյտ ամեն մի բոպէում։

Սա մաքրում է շատ լաւ և օրական 150—175 փութ հնտաւոր բամբակ, բացի Գոլլէտի Ճինից ընդհանրացած են Պրատտ-ի (Pratt), Տայլոր-ի (Taylor) Հալլ-ի (Hall) Ճիները։

Այդ մեքենաները բանեցնելու համար գործ են զրուտմ շոգի կամ ձիեր: Կան և ձեռքի մեքենաներ, որոնք կարող են մաքրել մօտաւորապէս 15—25 փութ հնատաւոր և արժեն 75—100 լուրի:

Կան նաև առանց սղոցների կամ «զլանաւոր ջիներ» (валыковые), որոց գործողութիւնը շատ նման է մեր հնագարեան չրեխներին. և մեր չրեխները, եթէ մի փոքր աւելի լաւ և մեծ դիրքով պատրաստուեն և յարմարեցնուեն շոգիի կամ ձիու ոյժի՝ թերեւս նոքա յետ չմնան իւրեանց գործողութեամբ յիշեալ ջիներից:

Այս տեսակի ջիները բամբակի մասզիկները պոկում են սերմերից և դուրս են բերում ամբողջութեամբ, որը աւելի գնահատելի է գործուածքի համար:

Մեքենայից դուրս եկած բամբակը պէտք է անմիջապէս սղմել մեծ մեշոքների (բարդանների) մէջ:

### ՀԱՄԱՌՈՅ ՀԱՃԻՒ ԲԱՄԲԱԿԻ ՄՃԱԿՈՒԹԵԱՆ.

Թու որքան քիչ արդիւնք է ստանում մեր երկրագործ գիւղացին բամբակի արտից և թէ որ աշան աւելի կարող է ստանալ նա կանոնաւոր մշաքանակութեամբ, այդ պարզ երեսում է հետեւեալ հաշիւներից. —

Առաջ ենք բերում այստեղ էջմիածնայ գա-

ւառի Սարդարապատի շրջականերում (մհալում) ընդունուած մշակութեան ձեռվ արած ծախսերը և եկամուտը, համարելով այդ իրրեւ տիպար ամբողջ Երեանեան նահանգի:

Մի ինալուար (500 ք. սժ.) հողի համար զիւղացու արած ծախսերը իւր մշակութեան ձեռվ.

|                              | Բորդի Կոչ. |
|------------------------------|------------|
| 1. Աշնան վարը գութանով       | 15—20 —    |
| 2. Դարնան վարը չթով          | 4— 5 —     |
| 3. Փոյշելը                   | 1— 2 —     |
| 4. Սերմը (հունար)            | 8—12 —     |
| 5. Ցանելը                    | 1— 2 —     |
| 6. Մարկոսելը (թումբ կազմելը) | 2— 3 —     |
| 7. Ջրելը (4—5 անգամ)         | 4— 5 —     |
| 8. Քաղհանել (3 անգամ)        | 30—40 —    |
| 9. Չանաքել (3 անգամ)         | 20—30 —    |
| 10. Տուն բերելը              | 2— 3 —     |
| 11. Հնդահան անելը (մաքրելը)  | 6—10 —     |

Գումարը 93—132 —

Կանոնաւոր մշակութեամբ կաւելանայ միմիայն ցանելու ծախսը (6 ր.—10 լուրի), իսկ մնացած բոլոր՝ թէ սերմի (4—5 փութ) թէ քաղհանելու (մանաւանդ եթէ գործ զրուի «կուտակող» գործիքը), թէ ջրելու, ծախսերը կպակասին, բայց եթէ մինչև անգամ ընդունենք ծախսը նոյնքան, այնու ամերքան ներկայումն զիւղացուն արժէ, այնու ամե-

Նայնիւ զուտ օգուտի մէջ անհամեմատ շատ տարբերութիւն կլինի.

Ահա—գիւղացին ստանում է 10—25 փութ մաքուր բամբակ, որը հաշուելով ընթացիկ գնով —6 ր. 50 կոպէկով

Կստանայ մաքրած բամբակից 65—162 ր. 50 կ.  
Հնտից (20—50 փ.) կստանայ 12—30 —

Հնդհանուր մուտք 77—192 ր.—50 կ.

Իսկ կանոնաւոր մշակութեամբ կստացուի  
50—70 փութ մաքուր բամբակ, որը 6 ր. 50 կոպ  
325 ր.—455 րուբի  
Հնտից (100—130 փ.) 60 ր.—78 րուբի

Հնդհանուր մուտք 385 ր.—533 րուբի.

Ուրեմն կանոնաւոր մշակութեամբ մի խալ-  
վար հողից 308—340 ր. 50 կոպ. կստացուի աւելի  
քան ներկայումս մեր գիւղացիք ստանում են:

Դուրս գալով ընդհանուր մուտքից ծախսը—  
93 ր.—132 ր. կստացուի զուտ արդինք (մի խալ-  
վար հողից) 292 ր.—401 րուբի, այն ինչ գիւ-  
ղացին ստանում է (77 ր.—193 ր. դուրս գալով  
93 ր.—132 ր.) առաջին գէպքում վնաս 16 ր.  
Իսկ երկրորդ գէպքում օգուտ 61 րուբի:

Վ Ե Ր Զ.

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԵԿ.

7932

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0080301